Հայկական սահման. Տավուշ

Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կենտրոն

Փետրվար, 2015 թ., Երևան

Հայկական սահման. Տավուշ, 47 էջ

© Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կենտրոն, 2015 թ.

Բոլոր իրավունքները պաշտպանված են

Հայկական Ուսումնասիրությունների Անի կենտրոն

ANI Armenian Research Center

www.aniarc.am aniarcf@gmail.com

Շապիկի նկարը՝ ադրբեջանական կրակի տակ ապրող Այգեպարի երեխաներից

Լուսանկարի հեղինակ՝ Սեդա Գրիգորյան, 2014 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4-6
Ռազմավարական նշանակությունը և աշխարհագրական դիրքը	7-8
Տավուշի դիմաց՝ Ղազախի, Աղստաֆայի և Թովուզի շրջաններ	9
Հայ-թաթարական/ադրբեջանական բախումները	10-11
Ենթակառուցվածքները	12-13
Կառավարության քայլը	14-15
Մարզի 24 համայնքները	16-17
Դժվարություններ և մարտահրավերներ	18-21
Գերակա ուղղությունները	22-28
Սոցիալական աջակցության կարգը	29
ՀՀ Օրենքը Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին	30-40
Նախագիծ՝ ՀՀ օրենքը Սահմանապահ համայնքների մասին	41-42
Քարտեզներ	43-46
ԱՆԻ-ի մասին	47

ՆԱԽԱԲԱՆ

Սա Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ հիմնադրամի (այսուհետ՝ ԱՆԻ կենտրոն կամ ԱՆԻ) անդրանիկ ծավալուն հրապարակումն է: Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի երկայնքով՝ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի մասին տեղեկագիր-զեկույց պատրաստելու շարժառիթներից մեկը Հայաստանի կառավարության ընդունած երկու օրենքներն էին: 2014 թվականի ամռանը արձանագրված հայ-ադրբեջանական լարվածությունը, որն իր տևողությամբ, ուժգնությամբ և հակամարտ բանակների կողմից օգտագործած զինատեսակներով աննախադեպ էր 1994-ի մայիսյան հրադադարից ի վեր, Հայաստանի կառավարությանը ստիպեց դիմել հրատապ քայլի: Սեպտեմբերին կառավարությունը հավանություն տվեց «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի նախագծին:

Նոյեմբերին Ազգային ժողովը արտահերթ նիստում երկրորդ և ամբողջական ընթերցմամբ ընդունեց օրենքի նախագիծը: Դեկտեմբերին Հայաստանի նախագահը ստորագրեց օրենքը, որը 2015 թվականի հունվարի 1-ից մտել է ուժի մեջ և տարածվում է 32 համայնքների վրա: Այդ համայնքներից հինգը Վայոց Ձորում են, մեկը՝ Արարատի մարզում (որոնք սահմանակից են Նախիջևանին), երկուսը՝ Գեղարքունիքի, իսկ մյուսները՝ Տավուշի մարզում: Մեկ այլ օրենքով, որը նույնպես ուժի մեջ է մտել հունվարի 1-ից, այդ համայնքների բնակիչներին տրվել է սոցիալական աջակցություն՝ սպառած էլեկտրաէներգիայի և գազի, ինչպես նաև՝ ոռոգման ջրի վարձավճարի մասնակի փոխհատուցում:

Այս զեկույցը Տավուշի մարզի մասին է և չի հավակնում պատասխանել բոլոր հարցերին, մասնավորապես՝ մեկնաբանել և պարզաբանել օրենքը: Այն զուտ տնտեսական ուղղվածություն չունի: Զեկույցը առաջին հերթին ծանոթագրական է, տեղեկատվական և նկարագրական: ԱՆԻ-ի նպատակն է հնարավոր մատչելի կերպով ներկայացնել այն գյուղերը, որոնց վրա տարածվում է օրենքը: Բոլոր համայնքները չէ, որ գտնվում են հակառակորդի տեսադաշտում և գնդակոծության տակ: Այդ համայնքները պայմանականորեն կարել է դասակարգել մի քանի խմբերում:

Առաջին խմբում այն գյուղերն են, որոնք հակառակորդի ուղիղ նշանառության տակ են: Այդ գյուղերում ոչ միայն վտանգավոր է հող մշակելը, այլ պարզապես փողոց, երբեմն՝ տնամերձ հողամաս դուրս գալը կարող է դառնալ ճակատագրական: Այդ համայնքներն են՝ Այգեպար, Չինարի, Մոսեսգեղ (Մովսես), Ներքին Կարմիրաղբյուր, Բերքաբեր, Բարեկամավան, Կոթի, Դովեղ: Երկրորդ խմբում կարելի է դասել այն գյուղերը, որտեղ վտանգը մեծանում է սահմաններում լարվածության աճի և փոխհրաձգությունների ընթացքում՝ Բերդավան, Բաղանիս, Ոսկեվան, Ոսկեպար, Կիրանց, Այգեհովիտ, Վազաշեն, Պառավաքար: Երրորդ խմբում այն համայնքներն են, որոնց վրա օրենքի ուժը տարածվում է, քանի որ դրանք վարելահողեր և այգիներ ունեն Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի մոտ՝ Ծաղկավան, Սարիգյուղ, Սևքար, Կողբ, Ձորաթան, Վերին Կարմիրաղբյուր, Արծվաբերդ, Այգեձոր:

Օրենքի նախագծի քննարկման ընթացքում խորհրդարանի պատգամավորներից ոմանք նշում էին, որ անհրաժեշտ է հստակ առանձնացնել այն համայնքները, որոնք հակառակորդի ուղիղ

նշանառության տակ են: Այսպես, անարդար է նույն հարթության մեջ դիտել, օրինակ, Բարեկամավանն ու Արծվաբերդը, կամ՝ Չինարին ու Սևքարը: Բարեկամավանն ու Չինարին արդեն 25 տարի հակառակորդի նշանառության տակ են, բազմաթիվ անգամ ենթարկվել են հարձակումների, գնդակոծությունների ու ռմբահարումների, տվել զոհեր, մինչդեռ Արծվաբերդում և Սևքարում կյանքի համար որևէ վտանգ կամ սպառնալիք չկա: Կամ, եթե հավասարության նշան է դրվում հակառակորդի անդադար կրակոցների տակ գտնվող Այգեպարի և համեմատաբար ապահով Սարիգյուղի միջև, ապա ի՞նչու պետք է գործարարը ներդրում կատարի չափազանց ռիսկային համարվող Այգեպարում:

Օրենքի վիճահարույց կետերից մեկն էլ երեք տարի ժամկետի ամրագրումն էր: Եթե նշվում է ժամկետ, ապա այն պետք է ավելի երկար լիներ: Տրամաբանական և արդարացված կլիներ ժամկետ ընդհանրապես չդնել կամ երեք տարուց երկար ժամանակահատված նշել, որպեսզի գործարարը հասցներ ոչ միայն սկսել գործարարություն, այլ ծավալվեր, ստանար շահույթ:

Այս զեկույցը օգտակար կլինի այն գործարարների համար, ովքեր մտադրություն ունեն գործարարությամբ զբաղվել այդ համայնքներում կամ իրենց բիզնեսի մի մասը տեղափոխել այնտեղ: Զեկույցը կօգնի քաղաքացիներին՝ Հայաստանում և Սփյուռքում, ավելի լավ պատկերացնել, թե ի՞նչ ասել է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակ, արդյոք հնարավոր է՞ ներդրումներ կատարել բարձր ռիսկայնության գոտում, ի՞նչպիսի դժվարությունների և մարտահրավերների պետք է առերեսվել:

Արցախյան հակամարտությունը կարող է շարունակվել ևս տասնամյակներ՝ առանց այսօրվա ստատուս-քվոյի փոփոխության: Ակնհայտ է՝ Բաքուն շարունակելու է լարվածության և կրակի տակ պահել ոչ միայն Ադրբեջան-Արցախ հատվածը, այլև Ադրբեջան-Հայաստան պետական սահմանին մոտ գտնվող բնակավայրերը: Այլընտրանք չի մնում, քան համակերպվել ստեղծված վիճակին և ձևավորել անվտանգության նոր համակարգ: Սահմանը պաշտպանում են ոչ միայն զենքով ու սահմանապահ զինվորներով, այլ առաջին հերթին՝ աշխատանքով: Ամենաամուրը այն սահմանն է, որը թիկունքում ունի ուժեղ, աշխատասեր, բարեկեցիկ համայնք:

ԱՆԻ-ի նպատակն է ներկայացնել համապարփակ, ամբողջական և անկողմնակալ զեկույց և հարակից տեղեկատվություն Տավուշի մարզի ռազմավարական և աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, ենթակառուցվածքների, աշխատուժի, համայնքների անցյալի ու ներկայի մասին:

Զեկույցը գրելու ընթացքում և նախապես այցելել ենք Տավուշի մարզի սահմանային բոլոր գյուղերը, որոշ դեպքերում՝ մի քանի անգամ, հանդիպել և զրուցել գյուղապետերի, շարքային քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, տեղի գործարարների հետ:

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքը մեծ ոգևորություն չի առաջացրել անգամ այն գյուղերում, որոնց վրա տարածվում է օրենքը: Նկատելի է թերահավատություն և անտարբերություն: Չկա վստահություն ոչ միայն այս օրենքի, այլ տեղական և հանրապետական իշխանությունների, կառավարության ու Ազգային ժողովի գործունեության նկատմամբ ընդհանրապես: Գյուղացիները լսել էին օրենքի ընդունման մասին, բայց մանրամասներին տեղյակ չէին: Շատ գյուղապետեր ևս ծանոթ չէին և չէին կարդացել օրենքը: Որոշ գյուղապետեր ոչ միայն լավ ծանոթ էին օրենքին, այլ առաջին քայլերն էին

ձեռնարկում ներդրումներ գրավելու ուղղությամբ: Այս իմաստով հատկանշական էր սահմանապահ Մովսես և Չինարի գյուղերի համայնքապետերի համատեղ մամուլի ասուլիսը Երևանում:

Թեև զեկույցը մասամբ գրվել է համայնքապետերի, գյուղացիների, տեղի գործարարների, հասարակական-քաղաքական գործիչների հետ հանդիպումների և զրույցների արդյունքում նաև, ԱՆԻ-ն որոշեց անուններ չտալ, կոնկրետ մեջբերումներ չանել (այդ մասին զրուցակիցները տեղեկացվել են նախքան հանդիպումը), որպեսզի մարզի բնակիչները, առաջին հերթին՝ համայնքապետերը, ավելի անկաշկանդ արտահայտվեն և հստակ ներկայացնեն խնդիրները, դժվարություններն ու մարտահրավերները:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը Վրաստանի հետ ունի մոտ 50, իսկ Ադրբեջանի հետ՝ 300 կիլոմետր ընդհանուր սահման: Տավուշի մարզով են անցնում ռազմավարական և անփոխարինելի նշանակություն ունեցող հյուսիս-կովկասյան գազատարը, անդրկովկասյան երկաթուղին և Հայաստանը Վրաստանով Ռուսաստանին կապող ցամաքային ճանապարհը՝ Նոյեմբերյան-Սադախլո-Թբիլիսի-Ստեփանծմինդա-Վերին Լարս:

Այսպիսով, Տավուշի մարզը ունի անգնահատելի և անփոխարինելի նշանակություն: Մարզի, մասնավորապես սահմանամերձ գյուղերի ամրությունը առաջնահերթ է: Հետևաբար, կառավարության՝ սահմանամերձ գյուղերին սոցիալական արտոնություններ տրամադրելու և այդ համայնքներում գործարարությունը հարկերից ազատելու որոշումը ուշացած, բայց էական քայլ է:

Հյուսիս-կովկասյան գազատարով ռուսական գազը Վրաստանի տարածքով հասնում է Տավուշի մարզ, ապա խողովակաշարային ցանցով տարածվում Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում: Այս գազատարը կառուցվել է Խորհրդային Միության փլուզման նախօրեին, երբ Բաքվի իշխանությունները որոշում կայացրին փակել Ադրբեջանից Հայաստան մտնող գազատարը: Արցախյան պատերազմի տարիներին նորակառույց գազատարը, որն անցնում է Վրաստանի գերազանցապես ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլի երկրամասով (անմիջական սամանակից է Ադրբեջանին), ավելի քան 40 անգամ պայթեցվել է: Հայկական կողմը կասկած չուներ, որ դա արվում է Ադրբեջանի հատուկ ծառայությունների ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ: 2007-ին կառուցվեց Իրան-Հայաստան գազատարը, սակայն մինչև այսօր իրանական գազը կենցաղային նպատակներով չի օգտագործվում: Այն Հայաստանում վերածվում է էլեկտրաէներգիայի և բարձրավոլտ լարերով հետ ուղարկվում Իրան:

Հայաստանից դուրս եկող միակ գործող երկաթուղին ևս անցնում է Տավուշի մարզով: Այդ երկաթուղով են իրականացվում Երևան-Թբիլիսի, ամառային շրջանում՝ Երևան-Թբիլիսի-Բաթում չվերթերը, ինչպես նաև՝ Հայաստանի ապրանքաշրջանառության հիմնական մասը: Արցախյան պատերազմի տարիներին երկաթուղին Վրաստանի ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլիի երկրամասում պայթեցվել է ավելի քան 20 անգամ:

Քանի դեռ Թուրքիան և Ադրբեջանը շարունակում են Հայաստանը շրջափակման տակ պահելու թշնամական քաղաքականությունը, Հայաստանի համար դեպի Վրաստան և Ռուսաստան, ինչպես նաև դեպի Իրան ցամաքային ուղին կունենա կենսական նշանակություն:

Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի՝ Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռների վրա: Ծովի մակարդակից ամենաբարձր կետը Մուրղուզ լեռն է՝ 2993 մետր: Հայաստանում ծովի մակարդակից ամենացածր կետը Տավուշի մարզում է՝ Դեբեդի հովտում՝ հայ-վրացական սահմանին՝ 379 մետր:

Տավուշի մարզով հոսող գետերը պատկանում են Կասպից ծովի՝ Քուռ գետի ավազանին: Մեծ և փոքր գետերից են Դեբեդը, Աղստևը, Խնձորուտը, Ոսկեպարը, Տավուշը, Հախումը, Քարահանը, Բաղանիսը, Կողբը: Բոլոր գետերը հոսում են անմիջապես դեպի Ադրբեջան, բացի Դեբեդից, որը նախ մտնում է Վրաստան, ապա այնտեղից՝ Ադրբեջան:

Ոռոգման նպատակով Խորհրդային Միության տարիներին մարզում կառուցվել են մի քանի ջրամբարներ՝ Ջողազը, Տավուշը, Խնձորուտը, Չինարին, Հախումը, Այգեձորը: Ջրամբարներից ամենամեծը Ջողազն է, որը հենց հայ-ադրբեջանական սահմանին է: Արդեն 25 տարի ջրամբարը ոռոգման նպատակով չի օգտագործվում: Ձկնորսությունը ևս վտանգավոր է, քանի որ կրակում են:

Ջողազի ջրամբարը շահագործման է հանձնվել 1980-ականների սկզբին: Այն կառուցվել էր Խորհրդային Հայաստանի Նոյեմբերյանի և Իջևանի, ինչպես նաև՝ Խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանի հողերը ոռոգելու նպատակով: Հայ-ադրբեջանական դիմակայության հենց սկզբում ադրբեջանցիները թալանեցին պոմպակայանն ու խողովակները:

Տավուշի մարզում կա բնական մեկ լիճ՝ Պարզ լիճը: Մարզի ավելի քան 50 տոկոսը անտառապատ է, ինչը Տավուշին տալիս է անկրկնելի գեղեցկություն տարվա բոլոր եղանակներին: Հայաստանում անտառները կազմում են հանրապետության տարածքի շուրջ 13 տոկոսը, որոնց մեծ մասը հենց Տավուշում է: Մարզի տարածքի մեծագույն մասը հետանտառային՝ ցածրլեռնային է (379-ից 800 մետր) և անտառային՝ ցածր ու միջինլեռնային (800-ից 2300 մետր), իսկ փոքր հատվածը՝ ալպյան և մերձալպյան բարձրլեռնային:

Պատմամշակութային հուշարձաններից հայտնի են Հաղարծինը, Մակարավանքը, Գոշավանքը, Կիրանց վանքը, Մշկավանքը, Խորանաշատը, Նոր Վարագավանքը, Տավուշի բերդը (հիշատակվում է Բագրատունիների թագավարության շրջանից՝ 10-րդ դարից):

Մետաղային օգտակար հանածոներից մարզի տարածքում կա կապար, ցինկ, մանգան, պղինձ, մոլիբդեն և երկաթ: Ոչ մետաղային օգտակար հանածոներից են տուֆը, դոլոմիտը, մարմարը, կրաքարը, տրավերտինը, կավը, բենտոնիտը, ֆելզիտը, բազալտը: Հանքային ջրերից հայտնի է «Դիլիջանը»:

ՏԱՎՈՒՇԻ ԴԻՄԱՑ՝ ՂԱԶԱԽԻ, ԱՂՍՏԱՖԱՅԻ և ԹՈՎՈՒԶԻ ՇՐՋԱՆՆԵՐ

2014 թ. սեպտեմբերի վերջերին Բաքվի իշխանությունները որոշում ընդունեցին Հայաստանի հետ սահմանների երկայնքով զինել քաղաքացիական բնակչությանը: Ադրբեջանի առաջնորդի հրամանագրում ասվում էր, որ շփման գծին հարող գյուղերի բնակիչներից անհրաժեշտ է կամավորական պարեկային ջոկատներ ստեղծել: Ավելի վաղ՝ հուլիս-օգոստոսին, հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի հատվածում լարվածությունը հասել էր ամենաբարձր աստիճանի 1994-ի մայիսյան անժամկետ հրադադարից ի վեր: Կողմերը փոքր և միջին, որոշ դեպքերում՝ խոշոր տրամաչափի զենքերից, գնդակոծում էին սահմանի երկայնքով տեղաբաշխված գյուղերը:

Հայ-ադրբեջանական սահմանի շուրջ 300 կիլոմետրանոց հատվածը բաժին է ընկնում Տավուշի մարզին և դրա դիմաց Ադրբեջանի երեք շրջաններին՝ Ղազախի, Աղստաֆայի, Թովուզի: Այս երեք շրջանները միասին ունեն 300 հազարից ավելի բնակչություն՝ երկուսուկես անգամ ավելի, քան Տավուշի մարզի բնակչությունը:

Ադրբեջանի ծայր հյուսիս-արևմուտքում՝ հայ-վրաց-ադրբեջանական սահմանի եռանկյունում, Ղազախի շրջանն է, որն ունի 700 քառակուսի կիլոմետր տարածք և շուրջ 90 հազար բնակչություն: Շրջկենտրոնը և միակ քաղաքը Ղազախն է: Շրջանի որոշ հատվածներ՝ Յուխարը Ասկիպարան և Բարխուդարլին, որոնք Խորհրդային Հայաստանի մեջ անկլավներ էին, այժմ հայկական վերահսկողության տակ են: Իջևան-Բաքու գնացքը անցնում էր Բարխուդարլի կայարանով:

Հայկական վերահսկողության տակ են նաև Ղազախի շրջանի նախկին Աշաղը Ասկիպարա, Բաղանիս-Այրում, Սոֆուլու, Խեյրիմլի և Գրզըլհաջիլի բնակավայրերը:

Աղստաֆայի շրջանը ունի 1.5 հազար քառակուսի կիլոմետր տարածք և ավելի քան 80 հազար բնակչություն: Այն, ինչպես և Ղազախի շրջանը, ընդհանուր սահմաններ ունի Վրաստանի և Հայաստանի հետ: Շրջկենտրոնը և միակ քաղաքը Աղստաֆան է, որով անցնում է Բաքու-Թբիլիսի երկաթուղին: Աղստաֆայի շրջանով են անցնում Կասպիցից դուրս եկող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն ու Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը:

Թովուզի շրջանը ունի 1.9 հազար քառակուսի կիլոմետր տարածք և շուրջ 160 հազար բնակչություն: Շրջկենտրոնը և միակ քաղաքը Թովուզն է:

Այս երեք շրջանների տարածքը հարյուրամյակներ մաս են կազմել պատմական Հայքի Ուտիք նահանգի, եղել են հայահոծ: Արցախյան պատերազմի նախօրեին այս շրջաններում մնացած հայերը, ինչպես Ադրբեջանի հայությունն ամբողջությամբ, տեղահանվեց (զուգորդված ջարդերով) կամ հեռացավ Հայաստան, Ռուսաստան և այլ երկրներ:

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ/ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ

Տավուշի մարզի այսօրվա տարածքը հիմնականում համապատասխանում է պատմական Ուտիքին: Այն մաս է կազմել Արտաշեսյան, Արշակունյաց և Բագրատունյաց (Լոռվա թագավորություն) Հայաստանի: Վրաստանի Թբիլիսի (Թիֆլիս) կենտրոնը գրեթե միշտ եղել է ամենակարևոր քաղաքը տավուշցիների համար առաջին հերթին մոտիկության պատճառով: Երբ Բագրատունյաց Հայաստանը անկում ապրեց, Տավուշը Զաքարյան Հայաստանի կազմում ավելի մոտեցավ Թիֆլիսին: Պատմության հարյուրամյակների ընթացքում Հայաստանի այս հատվածը չի կրել թուրքական լուծը: 1555 և 1639 թվականների թուրք-պարսկական բաժանումների արդյունքում Տավուշի այսօրվա տարածքը անցել է Սեֆյան Իրանի տիրապետության տակ:

Տավուշը, որ 19-րդ դարի սկզբում Ելիզավետպոլի նահանգի կազմում էր, ռուս-պարսկական պատերազմի արդյունքում անցավ Ռուսական կայսրության տիրապետության տակ: 1828-1840 թթ. Ռոմանովների կայսրության կազմում ստեղծվեց Հայկական մարզը: 19-րդ դարի սկզբից Ռուսական կայսրության մաս կազմող Անդրկովկասը բազմաթիվ անգամ ենթարկվել է վարչական վերաբաժանումների: Տավուշի մարզի այսօրվա տարածքը մինչև 1868 թվականը մաս էր կազմում Վրաց-իմերեթական, ապա Թիֆլիսի նահանգի, իսկ մինչև 1918 թվականը՝ Ելիզավետպոլի նահանգի: Եվ քանի որ Ադրբեջանը 1918-ին ձևավորվեց Բաքվի և մասամբ Ելիզավետպոլի նահանգների տարածքների վրա, մուսավաթական ղեկավարությունը պահանջում էր նաև Տավուշի շրջանը: 1920-1921 թթ., երբ Հայաստանը խորհրդայնացվեց, այս շրջանի հայկական գյուղերը մաս կազմեցին Խորհրդային Հայաստանի, իսկ ադրբեջանական գյուղերը՝ Խորհրդային Ադրբեջանի:

Հայերն ու մուսուլմանները (թաթարները, որոնք հետագայում՝ 1939թ. ԽՍՀՄ մարդահամարից հետո, անվանվեցին ադրբեջանցիներ) միմյանց հետ ինչպես համակեցության, այնպես էլ բախումների և պատերազմների անցյալ ունեն: 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումները չեն շրջանցել նաև այսօրվա Տավուշի շրջանը: Հայերն ու մուսուլմանները, որոնց տավուշցիները միշտ կոչել են թուրքեր, պատերազմել են նաև 1918-1920 թթ., երբ կարճ ժամանակով գոյատևեցին Հայաստանի Առաջին Հանրապետությունն ու Մուսավաթական Ադրբեջանը:

Հենց որ փլուզվեց ԽՍՀՄ-ը, հայերն ու ադրբեջանցիները կրկին ներքաշվեցին պատերազմի մեջ Արցախում և Հայաստան-Ադրբեջան սահմանի ողջ երկայնքով: Ավելին, դեռ չէր բռնկվել Արցախյան շարժումը, երբ 1984-ի աշնանը խոշոր միջադեպ գրանցվեց հայ-ադրբեջանական սահմանի Դովեղ-Քեմեռլի հատվածում: Խորհրդային մամուլը շրջանցեց այդ բախումները. ազգամիջյան խնդիրների մասին գրելը տաբու էր:

Դովեղին պատկանող շուրջ 1800 հեկտար անտառը իրականում օգտագործում էին ադրբեջանցիները: Դովեղի անտառների աղբյուրներից ջուր տանելու նպատակով ադրբեջանցիները ջրատար էին կառուցել: Դա այնպիսի լարվածություն էր առաջ բերել, որ Խորհրդային Հայաստանի առաջնորդ Կարեն Դեմիրճյանը Մոսկվայում հանդիպել էր Ադրբեջանի առաջնորդ Քյամրան Բաղիրովի հետ և պայմանավորվել, որ ջրատարի հարցը տեղում ուսումնասիրվի: Հայկական և ադրբեջանական կողմերից պատասխանատուներ էին նշանակվել երկու հանրապետությունների կառավարությունների ղեկավարների տեղակալները:

Հարցը կարգավորելու նպատակով Վլադիմիր Մովսիսյանը և նրա ադրբեջանցի գործընկերը հանդիպում են Իջևանում, ապա Նոյեմբերյանով հասնում Դովեղի անտառներ: Նրանց ուղեկցում էին նաև տեղական պաշտոնյաները: Ադրբեջանցիները հարձակվեցին հայերի վրա՝ մարմնական վնասվածքներ հասցնելով Մովսիսյանին ու նրան ուղեկցող մյուս հայերին: Նրանց տեղափոխեցին Քեմեռլի և փորձեցին ստիպեցել թուղթ ստորագրել տալ, որով կհրաժարվեին անտառներից: Իրադրության հանդարտեցումից հետո Մովսիսյանին և նրան ուղեկցող մյուս հայերին թույլ տվեցին հեռանալ: Այդ ընթացքում Դովեղում և ամբողջ Նոյեմբերյանում լուր տարածվեց, որ «թուրքերը Մովսիսյանին ու մյուս հայերին սպանում են»: Գյուղացիները վերցրեցին իրենց որսորդական զենքերը և շարժվեցին դեպի Քեմեռլի: Արյունալի թվացող բախումը կանխվեց:

Այս միջադեպի արձագանքը հասավ մինչև Մոսկվա: Խորհրդային Միության առաջնորդներից Եգոր Լիգաչովը Մովսիսյանին հրավիրեց Մոսկվա՝ մանրամասների մասին տեղեկանալու նպատակով:

Դովեղում արձանագրված միջադեպից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև կատարվում է վարչական սահմանների հստակեցում՝ Նոյեմբերյանից մինչև Մեղրի: Ընդունվում է փաստաթուղթ, որը վերնագրված էր «Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ առանձին հողօգտագործողների միջև սահմանների վերականգնման (ճշգրտման) մասին»: Հաստատվում է, որ Դովեղի անտառները, արոտավայրեր Սիսիանում, Բարդի շրջանի Թաղիլար գյուղի տարածքը, 7-րդ դարի Ոսկեպարի եկեղեցին և այլ տարածքներ, ընդհանուր առմամբ՝ գրեթե 15 հազար հեկտար, պատկանում են Խորհրդային Հայաստանին:

Այսպիսով, նախքան 1988-ի Արցախյան շարժումը, հայ-ադրբեջանական թշնամություն կար Նոյեմբերյան-Ղազախ հատվածում: Ավելին, Արցախյան պատերազմը դեռ չէր սկսվել, երբ 1990-ի գարնանն ու ամռանը տասնյակ զոհերով ու վիրավորներով հայ-ադրբեջանական բախումներ արձանագրվեցին Նոյեմբերյան-Ղազախ հատվածում: Հայերը նվաճեցին Ղազախի շրջանի յոթ ադրբեջանական գյուղեր (Յուխարը Ասկիպարա, Աշաղը Ասկիպարա, Բարխուդարլի, Սոֆուլու, Բաղանիս-Այրում, Խեյրիմլի, Գըզըլհաջիլի), որոնք սեպի նման խրվել էին Նոյեմբերյանի և Իջևանի շրջանների մեջ:

Խորհրդային տարիներին հանրապետությունների քարտեզը այնպես էր գծվել, որ մեկը մյուսում, կղզյակների ձևով, ունեին տարածքներ: Այսպես, Ղազախի շրջանը Նոյեմբերյանի և Իջևանի շրջաններում ուներ երեք այդպիսի կղզյակներ, որտեղ և գտնվում էին այդ գյուղերից մի քանիսը: Ավելին, Երևան-Թբիլիսի մայրուղու Իջևան-Նոյեմբերյան հատվածի մի մասն անցնում էր Խորհրդային Ադրբեջանի տարածքով կամ նրան մոտ տեղանքով:

Այսօր արդեն ճանապարհն անցնում է վարչականորեն Հայաստանին պատկանող տարածքներով, ճիշտ է, որոշ հատվածներում այնպիսի տեղանքով, որը հակառակորդը կարող է գնդակոծել: Մինչև 2000-ական թվականների կեսերը ամերիկահայ բարերար Քըրք Քըրքորյանի տրամադրած միջոցներով կառուցվեց մոտ 8 կիլոմետրանոց նոր ճանապարհ Կիրանց-Ոսկեպար-Բաղանիս հատվածում: Նախկին ավելի կարճ՝ Կիրանց-Ոսկեպար-Բաղանիս երեք կիլոմետրանոց հատվածն անցնում էր Խորհրդային Ադրբեջանի տարածքով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Տավուշի մարզը զբաղեցնում է Հայաստանի ընդհանուր տարածքի շուրջ 9 տոկոսը՝ 2.7 հազար քառակուսի կիլոմետր: Բնակչության թիվը շուրջ 130 հազար է: Մարզկենտրոնը Իջևան քաղաքն է: Մարզը իր մեջ ներառում է նախկին Շամշադինի, Նոյեմբերյանի և Իջևանի շրջանները Դիլիջանի հետ միասին: Մարզում համայնքների թիվը 62 է, որից 5-ը՝ քաղաքային՝ Իջևան (շուրջ 20 հազար բնակիչ), Դիլիջան (15 հազար), Բերդ (8 հազար), Նոյեմբերյան (5.500) և Այրում (2.400):

Մարզի ավտոմոբիլային ճանապարհները համեմատաբար բարեկարգ վիճակում են, թեև կան միջգյուղային հատվածներ, որոնք ունեն վերանորոգման կարիք: Անբարեկարգ վիճակում են Բերդի տարածաշրջանի մի քանի հատվածներ: Ռազմավարական կարևորություն ունեցող Ճամբարակ (Գեղարքունիքի մարզ)-Բերդ ճանապարհը կապիտալ վերանորոգման կարիք ունի:

Երևան-Թբիլիսի գնացքը անցնում է երկաթուղային Այրում կայարանով: Խորհրդային Միության տարիներին գործում էր Իջևան-Բաքու գնացքը, որը արդեն 25 տարի պարապուրդի է մատնված: Չի գործում նաև հայկական երկաթուղու Իջևան-Հրազդան հատվածը:

Տեղական նշանակության երկու՝ Այգեպարի (Բերդի ենթաշրջան) և Բագրատաշենի (Նոյեմբերյան) օդանավակայանները, որտեղից չվերթեր էին իրականացվում դեպի Երևան, չեն գործում: Չվերթերի դադարեցումը պայմանավորված էր առաջին հերթին Խորհրդային Միության փլուզման հետևանքով ստեղծված տնտեսական վիճակով: Ժամանկին Երևանից չվերթեր էին իրականացվում հանրապետության մի շարք շրջաններ: Դրանցից և ոչ մեկը, անգամ ամենահեռավոր Կապան, այսօր չի իրականացվում: Մյուս կողմից, Երևանից Այգեպարի օդանավակայան թռիչք իրականացնելը, հաշվի առնելով Ադրբեջանի կողմից հնարավոր սադրանքները, այսօր իրատեսական չէ:

Տավուշի մարզում հյուրանոցային բիզնեսը թերզարգացած է, բարձրակարգ հյուրանոցներ, բացառությամբ Դիլիջան քաղաքի, չկան: Ճիշտ է, պահանջարկն է ստեղծում առաջարկ, սակայն կարելի է բերել բազմաթիվ բիզնես օրինակներ, երբ ճիշտ, հիմնավորված առաջարկը խթանել է պահանջարկը:

Տավուշի մարզում, առաջին հերթին Բերդի ենթաշրջանում, անհրաժեշտ են ենթակառուցվածքներ զբոսաշրջության և անտառային հանգստի կազմակերպման համար: Այդ հարցում կարևոր դերակատարություն կարող են ունենալ Հայաստանը որպես պետություն, սփյուռքյան բարեգործական և հասարակական-քաղաքական, կրոնական-հարանվանական կառույցները:

Անկախության 25 տարիներին, կարելի է ասել, Բերդի ենթաշրջանում որևէ լուրջ ներդրում չի կատարվել: Անտառային, գեղատեսիլ այդ շրջանում չի կառուցվել որևէ հյուրանոց կամ առողջարանային համալիր, որը կարող էր իր հետ բերել զբոսաշրջիկներ Հայաստանից, Սփյուռքից և արտերկրից: Հայաստանյան և սփյուռքյան սկաուտական կազմակերպությունները իրենց բանակումները, պետական գերատեսչություններն ու կուսակցությունները իրենց ժողովները, հասարակական կազմակերպությունները իրենց սեմինարներն ու խորհրդաժողովները կարող էին անցկացնել Բերդի ենթաշրջանում, եթե դրա համար ստեղծվեն անհրաժեշտ պայմաններ, ինչպես

ստեղծվել են Ծաղկաձորում, Աղվերանում, Ջերմուկում, Դիլիջանում: Բերդի ենթաշրջանը մայրաքաղաքից անհամեմատ հեռու է, ինչը հնարավոր է փոխհատուցել ճկուն գնային քաղաքականությամբ:

Եթե Տավուշի մարզի Դիլիջանի, Իջևանի և Նոյեմբերյանի ենթաշրջանները ընկնում են Երևան-Թբիլիսի բանուկ ճանապարհի վրա՝ սրանից բխող առավելություններով ու հնարավորություններով, ապա Բերդի ենթաշրջանը, ինչ որ իմաստով, փակուղի է: Չափազանց կարևոր նշանակություն կունենա Բերդ-Ճամբարակ ճանապարհի վերանորոգումը: Այդ ճանապարհը ոչ միայն կրճատում է Բերդի և մայրաքաղաքի միջև հեռավորությունը, այլ ունի ռազմավարական կարևորագույն նշանակություն: Ավելին, դա Հայաստանի գեղեցկագույն անկյուններից է և բարեկարգ ճանապարհը իր հետ կբերի զբոսաշրջիկների:

Այս ճանապարհի վերանորոգման հարցում Հայաստանի ղեկավարության, Սփյուռքի և «Հայաստան» համահայկական հիմնադրամի համապատասխան որոշումը ուշանում է: Իր ռազմավարական դիրքով Տավուշի մարզը և նրա Բերդի ենթաշրջանը ունի նույնքան կարևորություն, եթե ոչ ավելի, որքան Արցախը: Գիտակցելով, որ ամենից մեծ վտանգը հենց Արցախի ուղղությամբ է, այդուհանդերձ, արդարացված չէ հիմնադրամի հեռուստամարաթոնների ընթացքում հանգանակված գումարները գերազանցապես Արցախ ուղղելու անփոփոխ քաղաքականությունը:

Բերդ-Ճամբարակ հանրապետական նշանակության ճանապարհի վերանորոգումից բացի կարևոր է Իջևան-Իծաքար-Նավուր-Բերդ ճանապարհի վերանորոգումը: Իսկ մարզկենտրոն Իջևանից Բերդ տանող հիմնական ճանապարհը, որը որոշ տեղերում անցնում է հենց Ադրբեջանի սահմանի երկայնքով, պետք է լինի առավել բարեկարգ և անվտանգ, հատկապես՝ Վազաշեն-Պառավաքար հատվածում:

Խորհրդային տարիներին Բերդի (նախկինում՝ Շամշադին) շրջանի կապը Երևանի և Հայաստանի մյուս բնակավայրերի հետ իրականացվել է նաև Ադրբեջանի տարածքով: Այսպես, Բերդից Երևան հասնելու համար մեքենաները սահմանային Այգեպար գյուղով, որի հարևանությամբ գտնվում էր Բերդի օդանավակայանը, մտնում էին Խորհրդային Ադրբեջանի տարածք և անցնելով Թովուզ, Աղստաֆա և Ղազախ քաղաքներով, կրկին մտնում Խորհրդային Հայաստանի տարածք՝ Իջևան և ճանապարհը շարունակում դեպի Երևան ու այլ քաղաքներ:

Երբ սկսվեցին հայ-ադրբեջանական առաջին բախումները, այդ ճանապարհը փակվեց: Տավուշի մարզի Բերդի ենթաշրջանի համար անհրաժեշտ են ամուր ենթակառուցվածքներ, առաջին հերթին՝ բարեկարգ և արագընթաց ճանապարհներ: Առանց դրա շատ դժվար կլինի ակնկալել ներդրումներ:

Այս տարվա “Հայաստան” համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնը արդարացված կլինի ամբողջությամբ նվիրել Տավուշի մարզին և հիմնականում Բերդի ենթաշրջանին: Նման հեռուստամարաթոնը և «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի գործադրությունը ի զորու կլինեն մի քանի տարիների ընթացքում էականորեն փոխել մարզի ենթակառուցվածքները, ապահովել աշխատատեղեր, բարելավել քաղաքացիների սոցիալական վիճակը և կանգնեցնել արտագաղթը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԸ

Հայաստանում հողի սեփականաշնորհումը համընկավ Արցախյան պատերազմի և Հայաստան-Ադրբեջան սահմաններում ռազմական գործողությունների հետ: Որոշ գյուղացիներ հող ստացան, երբ արդեն այդ հողակտորը մշակելը դարձավ վտանգավոր կամ անհնար: 1994-ի մայիսյան անժամկետ հրադադարից հետո պայմանները չբարելավվեցին: Տարին տարու վրա հակամարտող կողմերը չվերահսկվող՝ չեզոք գոտու հաշվին, իրենց առաջապահ դիրքերը առաջ էին տանում, զբաղեցնում հարմար բարձունքներ: Որքան կողմերը առաջ են տանում իրենց առաջապահ զինվորական դիրքերը, այնքան ավելի է դժվարանում սահմանամերձ գոտու հողատարածքների մշակումը:

Այսօր հազարավոր հեկտար հողատարածքներ, որտեղ խորհրդային տարիներին ստացվում էր տոննաներով հացահատիկ, խաղող, պտուղ-բանջարեղեն, պարզապես չեն մշակվում: Այսպես, Բարեկամավանում չի մշակվում 350 հեկտար բարեբեր հող, քանի որ ուղիղ հակառակորդի նշանառության տակ է: Բերքաբերում չի մշակվում ավելի քան 800 հեկտար հող: Այդ տարածքը ադրբեջանական վերահսկողության տակ է: Պառավաքարի հողերի շուրջ 1400 հեկտարն է ադրբեջանական վերահսկողության և կրակի տակ:

Այդ հողերը կմշակվեն միայն այն ժամանակ, երբ խաղաղություն հաստատվի կամ Երևանն ու Բաքուն պայմանավորվեն չկրակել բնակավայրերի և խաղաղ, աշխատավոր գյուղացիների ուղղությամբ: Նման բան առաջիկա տարիներին անիմաստ է ակնկալել, քանի որ լարվածությունը ամեն տարի ավելանում է, հակամարտության կողմերը որպես թիրախ ընտրում են հենց քաղաքացիական օբյեկտները և բնակչությանը:

Սակայն «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքը կարևոր է այն տարածքների համար, որոնք մշակվում են: Եթե ստեղծվեն մրգի և բանջարեղենի վերամշակման նոր արտադրամասեր, զարգանա մեղվապահությունը, հիմնվեն ջերմոցային տնտեսություններ, ապա դա իր հետևից կքաշի գյուղատնտեսությունը: Տավուշը Հայաստանի ամենագյուղատնտեսական մարզն է, բնակչության ավելի քան 60 տոկոսը կենտրոնացած է գյուղական համայնքներում:

Հողի սեփականաշնորհումը, չնայած ժամանակին և անգամ այսօր հնչող քննադատությանը, Հայաստանի նորանկախ իշխանությունների իմաստուն քայլերից էր: Այն դժվար իրավիճակում, որ այսօր հայտնվել է հայկական գյուղն ու գյուղացին, սեփականաշնորհման հետ անմիջական կապ չունի: Սխալները պետք է փնտրել այլուր:

Հողի սեփականաշնորհումից հետո սահմանամերձ գյուղերի բնակիչները տարիներ շարունակ բարձրաձայնում էին, որ արդար չէ համահավասարեցնել Արարատյան դաշտավայրի բնակավայրը և Տավուշի մարզի սահմանապահ գյուղը, անհրաժեշտ են արտոնություններ, մասնավորապես՝ չհարկել սահմանային գյուղատնտեսությունը: Թեև ուշացումով, Հայաստանի կառավարությունը

տվել է օրենսդրական արտոնություններ և ժամանակը ցույց կտա, թե ինչպես է այն կյանքի կոչվելու: Կառավարությունը իր քայլն արել է, մնում է, որ դրան արձագանքի բիզնեսը:

Անհրաժեշտ է Տավուշի մարզում կազմակերպել բիզնես խորհրդաժողով, հրավիրել գործարարներ Հայաստանից, Սփյուռքից և արտերկրից, ներկայացնել մարզի և սահմանամերձ տարածքների բիզնես-հնարավորությունները, մեկնաբանել և քննարկել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքը: Հակառակ դեպքում, մտահոգություն կա, որ այս օրենքը կմնա թղթի վրա:

Եթե Տավուշի սահմանամերձ գյուղերում չստեղծվեն մրգի և բանջարեղենի, մսամթերքի և կաթի վերամշակման արտադրամասներ, եթե չզարգանա խոզաբուխությունն ու մեղվաբուծությունը, ապա այս օրենքը մեծ փոփոխություններ չի բերելու և չի բարելավելու մարկանց ապրելակերպը: Գուցե մարզը ունի ներդրումային այլ հնարավորություններ, որոնք բացահայտելու համար անհրաժեշտ է գործարարների այցը այդ շրջան՝ տեղում ծանոթանալու իրավիճակին:

Գուցե անհրաժեշտ է ստեղծել ներդրումային ընկերություն, դրանում ներգրավել գործարարների, որոնց ներդրած գումարները անտոկոս կամ ցածր տոկոսադրույքով և առանց գրավի տրամադրել անհատ ձեռներեցների, մասնավոր ընկերությունների: Այդպիսի փորձ կատարվել է Արցախում: Սփյուռքահայերի, հիմնականում լիբանանահայերի «Արցախ Ռութս Ինվեսթմենթս» (ԱՌԻ) ընկերությունը Արցախի իշխանությունների հետ համագործակցաբար վարկավորում է գյուղատնտեսությունը Քարվաճառի և Քաշաթաղի շրջաններում, ինչպես նաև՝ ներդրումներ անում բնակարանաշինության ոլորտում: ԱՌԻ-ի ստեղծմանը նախորդել էր մի բիզնես-խորհրդաժողով, որ Բերձորում կազմակերպել էր սփյուռքահայ գործարար Ջեյմս Թուֆենկյանը:

ՄԱՐԶԻ 24 ՀԱՄԱՅՔՆԵՐԸ

որոնք 2015-2018 թթ. ստանալու են սոցիալական աջակցություն և որոնց վրա տարածվում է «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը

1	2	3	4	5
Բերդավան	3.267 հոգի	650 մետր	2.5 կմ	Քեմերլի
Կողբ	4.530	800	4.5 կմ	-
Դովեղ	558	650	1.5 կմ	Քեմերլի
Բարեկամավան	335	720	1 կմ	Քեմերիլի, Ղայմախլի, Ասլանբեյլի
Կոթի	2.210	750	2.5 կմ	Դաշ Սալահլի, Ուրկմազլի, Ֆարահլի
Ոսկեվան	1.444	930	1.5 կմ	Ղուշչի Այրում
Բաղանիս	832	850	2 կմ	Ղուշչի Այրում
Ոսկեպար	869	850	2.5 կմ	Մազամ
Կիրանց	289	720	1.5 կմ	Մազամ
Բերքաբեր	528	700	1.5 կմ	Մազամ, Քըզըլ Հաջիլի, Աբբասբեյլի
Ծաղկավան*	549	840	4.5 կմ	-
Սարիգյուղ	1.154	800	2 կմ	-
Սնքար	2.013	800	6 կմ	-
Այգեհովիտ	3.608	760	4.5 կմ	Ջաֆարլի
Վազաշեն	860	750	2 կմ	Բալա Ջաֆարլի, Խանլըքլար
Պառավաքար	1.725	850	2 կմ	Թաթլի, Քյոհնողշլաղ
Ներքին Կ. Աղբյուր	1.072	850	1.5 կմ	Ալիբեյլի, Հաջիալիլի
Այգեպար	639	680	1.5 կմ	Ալիբեյլի, Հաջիալիլի
Մոսեսգեղ (Մովսես)	1.951	1000	1.5 կմ	Աղդամ, Քոխանալի
Չորաթան	1.050	1000	6 կմ	-
Արծվաբերդ	3.228	1290	8 կմ	-

Վերին Կ. Աղբյուր	1.708	1320	6 կմ	-
Այգեձոր	2.495	830	3.5 կմ	-
Չինարի	1.256	750	1.5 կմ	Ասրիկ Զրդահան, Աղբուլաղ

1. Համայնքի անունը

2. Բնակչության թիվը

3. Բարձրությունը ծովի մակարդակից

4. Հեռավորությունը պետական սահմանից

5. Մոտակա ադրբեջանական գյուղ(եր)ը

* Տավուշի մարզում Ծաղկավան անունով երկու գյուղ կա՝ մեկը Իջևանի, մյուսը՝ Բերդի ենթաշրջանում: Այստեղ խոսքը Իջևանի շրջանի Ծաղկավան համայնքի մասին է:

* Բնակչության թվի (2012թ. հունվարի 1-ի դրությամբ), ծովի մակերևույթից բարձրության, Հայաստանի պետական սահմանից հեռավորության մասին տվյալները վերցրել ենք Տավուշի (http://tavush.gov.am/about-communities) մարզպետարանի կայքից: Համայքներում բնակչության իրական թիվը որոշ դեպքերում զգալի պակաս է, քան ներկայացնում են պաշտոնական տվյալները:

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Տավուշի մարզում առկա դժվարություններն ու մարտահրավերները, Հայաստանի մյուս գյուղատնտեսական մարզերի հետ համեմատած, գրեթե նույնն են: Հիմնական տարբերությունը **ռիսկայնությունն** է՝ պայմանավորված Ադրբեջանի հետ սահմանակից լինելու իրողությամբ: Խոսքը առաջին հերթին այն համայնքների մասին է, որոնք գտնվում են հակառակորդի անմիջական տեսադաշտում և որոնց վրա տարածվում է «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքը:

Օտարերկրյա ներդրումների լուրջ ակնկալիքներ չկան բարձր ռիսկայնության պատճառով: Մյուս կողմից, նախքան օրենքի ընդունումը, Ոսկևան գյուղում Սլովակիայից փոքր ներդրում է խոստացվել: Գյուղի սկզբնամասում, ադրբեջանական դիրքերի տեսադաշտում գտնվող շինություններից մեկը գյուղապետարանը նվիրել է «Սլովակիա» ընկերությանը: Սլովակ մի ընտանիք խոստացել է 300 հազար եվրոյի ներդրում կատարել և մինչև 30 տեղանոց աշխատատեղով արտադրություն բացել, որտեղ կարտադրվի գարեջուր սլովակական տեխնոլոգիայով: Նախատեսվում է նաև ստեղծել արտադրամաս, որտեղ կթորվի օղի անտառային մրգերից և հատապտուղներից: Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

Հնարավոր ներդրողների շարքում կարող են լինել այդ գյուղերից հեռացած և արտասահմանում բիզնես գործունեություն ծավալող մարդիկ: Եթե արտասահմանցիները և սահմաններից հեռու բնակվող հայաստանցիները կրակոցներին սովոր չեն, ապա սահմանամերձ գյուղերի նախկին և ներկա բնակիչների համար կրակոցները առօրյայի մաս են կազմում:

Հենց բարձր ռիսկայնության հանգամանքը հաշվի առնելով, խորհրդարանում քննարկումների ընթացքում Ազգային ժողովի Օրինաց երկիր խմբակցության ներկայացուցիչներից Մհեր Շահգելդյանը անհրաժեշտ համարեց ստեղծել ռիսկերի ապահովման հիմնադրամ:

Օրենքի բացերից հիմնականը **երեք տարվա ժամկետի** ամրագրումն է: Խորհրդարանում քննարկումների ընթացքում որոշ պատգամավորներ առաջարկեցին երկարաձգել կամ ընդհանրապես ժամկետ չնշել: Երկու օրենքների ժամկետը լրանում է 2018 թվականի հունվարի 1-ին: 2018-ի փետրվարը նախագահական ընտրությունների հերթական ժամանակն է:

Կառավարության կողմից հիմնական զեկուցող, տարածքային կառավարման նախարարի ժամանակավոր պաշտոնակատար Վաչե Տերտերյանը, ի պատասխան ասաց, որ երեք տարին լավ փորձաշրջան է օրենքի արդյունավետությունը ստուգելու համար:

Անկասկած, երեք տարի ժամկետ ամրագրելը լուրջ խոչընդոտ է լինելու այն գործարարների համար, ովքեր մտադրություն կարող էին ունենալ իրենց բիզնեսի մի մասը տեղափոխել սահմանամերձ գոտի կամ այդ համայնքներում բիզնես սկսել: Որևէ երաշխիք չկա, որ 2018 թվականի հունվարի 1-ից օրենքի ժամկետը երկարաձգվելու է: Իսկ եթե գործարարը չունի այդ երաշխիքը, ապա ի՞նչու պետք է իր բիզնեսը տեղափոխի բարձր ռիսկայնին գոտի կամ նոր բիզնես

նախաձեռնի: Տեղի գործարարները նշում են, որ երեք տարի ժամկետը շատ կարճ ժամանակամիջոց է և այդ ընթացքում անգամ դժվար կլինի ստեղծել արտադրություն և ստանալ առաջին արտադրանքը:

Այն համայնքներում, որոնց վրա տարածվում է օրենքը, բազմաթիվ խնդիրներ կան: Դրանց մի մասը օբյեկտիվ են, մյուս մասը՝ սուբյեկտիվ: Այդ խնդիրների մի մասը հնարավոր է լուծել կարճաժամկետ հատվածում, մյուս մասը՝ ոչ: Սակայն եթե չլինի քաղաքական որոշում և չձեռնարկվեն հստակ քայլեր, ապա Հայաստանի սահմանապահ այս հատվածը կկանգնի ավելի լուրջ մարտահրավերների առաջ:

Տավուշի մարզի սահմանապահ գյուղերում ազգային անվտանգությանը սպառնացող վտանգներից մեկը **արտագաղթն** է: Ճիշտ է, պատերազմի տարիներին և 1994-ի մայիսյան անժամկետ հրադադարից հետո որոշ ընտանիքներ հեռացել են պատերազմից և կրակոցներից իրենց երեխաներին հեռու պահելու նպատակով, սակայն այդ համայնքներից արտագաղթի հիմնական պատճառը հակառակորդի կրակոցները չեն: Հիմնական պատճառը գործազրկությունն է և արպես հետևանք՝ սոցիալական դժվար վիճակը:

Արտագաղթի ծավալները պատկերացնելու համար բավարար է այցելել դպրոցներ և առկա աշակերտության քանակը համեմատել այն թվի հետ, որը կար 20-25 տարի առաջ: Որոշ գյուղերում աշակերտության քանակը նվացել է երեքից հինգ անգամ, իսկ բացարձակ ռեկորդը պատկանում է Բարեկամավանին: Այսօր սահմանապահ այդ գյուղի դպրոցում սովորում է ընդամենը 23 աշակերտ, այն դեպքում, երբ ժամանակին դպրոց հաճախել է 330 աշակերտ: Աշակերտների խիստ նվազում է նկատվում նաև Այգեպար և Մովսես գյուղերի դպրոցներում:

Արտագաղթը, անկասկած, հետևանք է, և եթե չախտորոշվեն պատճառներն ու չգտնվեն լուծման ուղիները, ապա դպրոցներում շարունակվելու է պակասել աշակերտների թիվը, քանի որ գյուղերում պակասում են ծնունդները: Քանի որ սահմանապահ գյուղերից արտագաղթում են գերազանցապես աշխատանք չունենալու պատճառով և արդարացումով, ապա նախ և առաջ պետք է լուծել աշխատանքի՝ զբաղվածության խնդիրը:

Երկու տարի առաջ՝ 2013-ի ձմռանը, Մովսես գյուղում նախագահական քարոզարշավի ընթացքում Սերժ Սարգսյանի հայտարարություններից մեկը արժանացավ բուռն քննադատության և հեգնանքի: Երբ գյուղացիներից մեկը բողոքել էր, որ գործ չլինելու պատճառով մարդիկ լքում են Մովսեսը, Սարգսյանը հանդիմանել և հռետորական հարց էր տվել՝ «Ես ե՞մ մեղավոր, որ քո որդին Ռուսաստան է գնացել»:

Իրականում, անկասկած Սերժ Սարգսյանը կամ կառավարությունը չէ մեղավոր, երբ որևէ անհատ արտագաղթում է երկրից, սակայն հենց Սարգսյանն ու կառավարությունն են պատասխանատու շարունակվող արտագաղթի համար, քանի որ նրանց վարած ներքին և արտաքին քաղաքականության արդյունքում չեն ստեղծվում աշխատատեղեր, աղքատությունը կրճատվելու փոխարեն ընդլայնվում է և, որպես հետևանք, շարունակվում է արտագաղթը:

Արտագաղթի տխուր հետևանքներից մեկը սահմանապահ համայնքների **ծերացումն** է: Մասնավոր զրույցներում համայնքապետերը խոստովանում են, որ գյուղերում բնակչության 50, երբեմն ավելի տոկոսը թոշակառուներ են: Եվ դա պատահական չէ, քանի որ արտագաղթում է հիմնականում երիտասարդ և միջինից ցածր տարիքի բնակչությունը:

Համայնքների ընդհանուր ծերացումը բերել է **աշխատուժի ծերացման**: Սա, անկասկած, լուրջ խնդիր է, քանի որ գյուղատնտեսությունը ծանր աշխատանք է, կարիք ունի երիտասարդ ուժի: Մյուս կողմից սակայն, համայնքապետերը նշում են, որ պետական գրագետ քաղաքականություն իրականացնելու դեպքում գյուղերում առկա բնակչությունը բավարար է աշխատուժ ապահովելու իմաստով: Այսպիսով, սահմանամերձ յուրաքանչյուր գյուղում արտադրություն կամ որևէ այլ գործունեություն ծավալելու պայմաններում տվյալ համայնքը կարող է ապահովել համապատասխան աշխատուժ:

Սահմանամերձ գյուղերի երիտասարդության շրջանում արմատավորվել է այն կարծիքը, որ գյուղատնտեսությամբ՝ հող մշակելով, անասուն պահելով, հնարավոր չէ բարեկեցիկ կյանք վարել, ապահովել ընտանիքի ու երեխաների արժանապատիվ ապրուստը և ապրելակերպը: Այս կարծրատիպը անհրաժեշտ է ջարդել հաջողակ պատմություններով, որոնք, սակայն, այսօր հատուկենտ են:

Խնդիրներից մեկը, որ ընդհանուր է ողջ հանրապետության գյուղատնտեսության համար, **գյուղտեխնիկայի պակասն ու մաշվածությունն** է: Կոմբայինները, տրակտորները, մամլիչները և մյուս գյուղտեխնիկան խորհրդային ժամանակներից մնացածն է, որն արդեն ապրել է իր դարը: Այդ գյուղտեխնիկան անընդհատ փչանում է: Արտասահմանյան, այդ թվում ռուսական և չինական արտադրության գյուղտեխնիկան շատ թանկ է գյուղական համայնքների համար: Այդ պատճառով, գյուղացիները նախընտրում են վերանորոգել ավելի քան 30 տարեկան գյուղտեխնիկան, քան մտածել նորը ձեռք բերելու մասին: Եվ վարուցանքի, և բերքահավաքի ժամանակ գյուղտեխնիկան հաճախ շարքից դուրս է գալիս, որի հետևանքով գյուղատնտեսությունը հավելյալ վնասներ է կրում:

Ողջ Հայաստանում, բայց առաջին հերթին սահմանամերձ համայնքներում, գյուղատնտեսության զարգացման խոչընտոտներից են **սուբսիդավորման ցածր մակարդակն** ու **ապահովագրության բացակայությունը**:

Սահմանապահ գոտում և՛ հողագործությունը, և՛ անասնապահությունը սուբսիդավորման կարիք ունեն: Առաջիկա երեք տարիների համար սահմանամերձ համայնքներում հողի հարկը օրենքով հանվել է, իսկ կառավարությունը սուբսիդավորելու է ոռոգման ջրի 50 տոկոսը: Դա, անշուշտ, կարևոր քայլ էր, սակայն չպետք է ակնկալել, որ սահմանամերձ հատվածում հողագործությունը սուբսիդավորման կարիք այլևս չունի: Անհրաժեշտ է սուբսիդավորել նաև անասնապահությունը: Շատ երկրներ դրա համար ունենք պարզ բանաձև, որին կարող է հետևել Հայաստանը: Այսպես, եթե սահմանապահ գյուղում ընտանեկան տնտեսությունը պահում է մեկ գլուխ անասուն, ապա պետության կողմից մեկ տարվա համար որպես սուբսիդավորում ստանում է, ենթադրենք, 50 հազար դրամ: Եթե ընտանեկան տնտեսությունը պահում է 10 միավոր անասուն, ապա ստանում է տասն անգամ ավելի գումար:

Անասնապահության սուբսիդավորումը կարևոր է նաև մեկ այլ պատճառով. Հայաստանի ներքին շուկան զգալի չափով տավարի, խոզի և թռչնի մասի կարիք ունի և այդ կարիքը լրացվում է ներմուծման հաշվին: Այն խոսակցությունները, որ հաճախ շրջանառում են պաշտոնյաներն ու լրատվամիջոցները, թե իբր Եվրասիական տնտեսական միություն մտնելով Հայաստանը կարող է միս արտահանել, լուրջ չեն: Քանի դեռ Հայաստանը չի կարողանում ապահովել մսին ներքին պահանջարկը, տեղի է ունենալու հակառակը, այն է՝ Եվրասիական տնտեսական միության

անդամ երկրներից և այլ պետություններից Հայաստանը շարունակելու է միս ներմուծել՝ հարվածելով հայրենական արտադրությանը:

Պետական սուբսիդավորումը պետք է ներառի նաև վարկերը, պարարտանյութերը, թունաքիմիկատները, դիզվառելիքը:

Գյուղատնտեսությունը արտադրություն է բաց երկնքի տակ, ուստի այն ապահովագրման կարիք ունի: Առնվազն սահմանամերձ գյուղատնտեսությունը ապահովագրելու բեռը պետությունը պետք է վերցնի իր ուսերին կամ դառնա աջակից: Բնական աղետներին սահմանամերձ համայնքներում ավելանում է նաև ադրբեջանական կողմից պարբերաբար կրկնվող վնասարար գործողությունները: Խոսքը առաջին հերթին հացահատիկի արտերը հրդեհելու դեպքերին են վերաբերում:

Սահմանամերձ որոշ համայնքներում մասամբ կամ ամբողջովին առկա է **ոռոգման ջրի** պակասի խնդիր: Կան համայնքներ, որտեղ ջուրը բավարարում է, սակայն գյուղացիները գանգատվում են դրա թանկությունից: Ազգային ժողովի ընդունած օրենքով այդ խնդիրը մասամբ լուծվում է, քանի որ առաջիկա երեք տարիներին ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործած ոռոգման ջրի դիմաց գանձվող վարձավճարի 50 տոկոսը փոխհատուցելու է Հայաստանի կառավարությունը:

Նախնական **ֆինանսների բացակայությունը** ևս լուրջ խնդիր է սահմանամերձ համայնքների բնակիչների համար: Տեղական բանկերը հողագործության և անասնապահության զարգացման նպատակով վարկերի համեմատաբար բարձր տոկոսադրույքներ են սահմանել: Գյուղացիների համար ռիսկային է վարկ վերցնելը: Այս հարցում ևս կարող է ուսանելի լինել սփյուռքահայերի կողմից հիմնադրված ԱՐԻ ընկերության և Արցախի կառավարության համագործակցության օրինակը: Արցախի կառավարությունը տարեկան վեց տոկոսով վարկ է վերցնում ԱՐԻ-ից, իր կողմից այդ վարկը սուբսիդավորում և անտոկոս կամ ցածր տոկոսով ու առանց գրավի տրամադրում Քարվաճառի և Քաշաթաղի շրջանների գյուղացիներին:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեղվաբուծություն

Տավուշի մարզի՝ Ադրբեջանին հարակից գոտին, որի վրա տարածվում է «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքը, հիմնականում գյուղատնտեսական և անտառային շրջան է: Հետևաբար, առաջին հերթին պետք է մտածել այնպիսի արտադրության կազմակերպման մասին, որը հիմնված կլինի պտղի ու բանջարեղենի, հատապտուղների, փայտավերամշակման, ջերմոցային տնտեսությունների, մեղվաբուծության և անասնապահության վրա:

Խորհրդային ժամանակներում այս շրջանը մեղվաբուծությամբ առաջատար չի եղել, սակայն վերջին տարիներին ավելանում են փեթակները: Մեղվապահությունը աշխատատար է, դրա համար պահանջվում են նաև մասնագիտական գիտելիքներ և փորձ: Այդ փորձը մասամբ արդեն ձեռք է բերվել: Վերջին տարիներին Տավուշի ենթաշրջանում՝ Բերդ քաղաքում, անց է կացվում Մեղրի և հատապտուղների փառատոն, ինչը նույնպես խթան է մեղվաբուծության զարգացման գործում:

Տավուշի մարզի սահմանապահ հատվածում մեղվաբուծությունը կարող է դառնալ գերակա ուղղություն: Քանի որ մարզի մեղրը բացառիկ է իր համային և որակական հատկանիշներով, այն կարող է լուրջ դիրք զբաղեցնել օրգանական մեղրի սպառման միջազգային շուկայում:

Համարվում է, որ Հայաստանում արտադրված մեղրը, համեմատած մեղր արտահանող երկրներում արտադրվածի հետ, թանկ է: Այն գնով, որ սպառվում է մեղրը Հայաստանում, նույն գնով դժվար կլինի լուրջ տեղ զբաղեցնել և մեծ քանակներ սպառել միջազգային շուկայում:

Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2013-ին Հայաստանից արտահանվել է ընդամենը 7 տոննա մեղր, հիմնականում երեք երկրներ՝ Չինաստան (3 տոննա), Միացյալ Նահանգներ (2 տոննա) և Ռուսաստան (1.2 տոննա): Հայաստանից ամենամեծ ծավալով մեղր արտահանվել է 2004-ին՝ 44 տոննա, 2003-ին՝ 37.5 տոննա, 1997-ին՝ 26.5 տոննա, 1996-ին՝ 24.5 տոննա և 2011-ին՝ 18.5 տոննա: Պաշտոնական վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին Հայաստանից մեղրի արտահանումը անկում է ապրել:

Հայաստանը ոչ միայն մեղր է արտահանում, այլ նաև ներմուծում, ճիշտ է՝ անհամեմատ փոքր ծավալներով: 2014 թվականին մեկ կիլոգրամ մեղրը Հայաստանում վաճառվում էր 3500-ից 4000 դրամ միջին գնով: Դրամի արժեզրկման պայմաններում, հայկական մեղրը միջազգային շուկայում կարող է ավելի մրցունակ դառնալ: Հայաստանից արտահանվող և Հայաստան ներկրվող մեղրի գները զգալիորեն տարբեր են, ինչը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ Հայաստանից արտահանվող մեղրը բնական է և իր որակական ու համային հատկանիշներով գերազանցում է ներկրվողին: Այսպես, 2012-ին Հայաստանից մեղրը արտահանվել է մեկ կիլոգրամը 7.5 դոլար մաքսային արժեքով, իսկ ներմուծվել 3.7 դոլարով:

Տարեկան ողջ աշխարհում արտադրվում է մինչև 1.4 մլն տոննա մեղր, որից 400 հազար տոննան սպառվում է միջազգային շուկայում: Արտադրության ծավալներով առաջատարներն են Չինաստանը, ԵՄ-ն, Թուրքիան, Արգենտինան, Ուկրաինան, ԱՄՆ-ը, Մեքսիկան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Եթովպիան, Իրանը: Մեղրի ներմուծման ծավալներով առաջատարները Միացյալ Նահանգներն ու Եվրոպական Միությունն են:

Հայաստանում այսօր հաշվվում է մինչև կես միլիոն մեղվաընտանիք՝ փեթակ: Միջին հաշվով մեկ փեթակից ստացվում է 10-ից 30 կիլոգրամ մեղր: Տարեկան արտադրվում է 1000-ից մինչև 6000 տոննա մեղր՝ կախված եղանակային պայմաններից: Միջազգային շուկա հանվող մեղրի մեկ ստանդարտ կոնտեյները պարունակում է մոտ 18 տոննա մեղր: Այսօր մեղր արտահանող հայկական որևէ ընկերություն նման ծավալներ չի կարողանում ապահովել:

Այդուհանդերձ, Հայաստանից մեղրի արտահանման համար այսօր ստեղծվել են բարենպաստ պայմաններ: 2013-ին Հայաստանը Եվրոպական Միություն մեղր արտահանելու իրավունք է ստացել: Նախքան արտահանումը, մեղրը պետք է փորձաքննություն անցնի Հայաստանի լաբորատորիաներից մեկում: Այսօր, երբ աշխարհում, նաև՝ ԵՄ տարածքում, արձանագրվում է մեղուների անկում, Հայաստանը նոր հնարավորություններ է ստանում լրացնելու բացը: 500 միլիոնանոց Եվրոպական Միության շուկան տարեկան ներմուծում է անհրաժեշտ մեղրի ուղիղ կեսը:

Խոզաբուծություն

Հայաստանում խոզի մսի պահանջարկը բավարարվում է ներկրվող մսի հսկայական ծավալներով: Արտերկրից ներկրվող խոզի միսը զգալիորեն էժան է տեղականից, սակայն իր որակական և համային հատկանիշներով էապես զիջում է: Հայաստան խոզի միս ներկրում է իշխող Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ, օլիգարխ և Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Ալեքսանյանի հետ փոխկապակցված «Սամ-Սեր» ընկերությունը: Խոզի միսը հիմնականում ներկրվում է Բրազիլիայից՝ 2.5 դոլար մաքսային արժեքով, վաճառվում է մեկ կիլոգրամը մինչև 2.000 դրամով: Բրազիլական խոզի մսի ներկրման ծավալները վերջին տարիներին առնվազն կրկնապատկվել են:

Նման պայմաններում շուկայից տեղական միսը դուրս է մղվում, ինչի հետևանքով տեղական խոզաբուծությունը ոչ միայն չի զարգանում, այլ կրճատվում է: Ավելին, Տավուշի մարզի գյուղացիների մոտ կա համոզմունք, որ Աֆրիկյան ժանտախտ կոչվող հիվանդությունը տարածում է հենց այն ընկերությունը, որը ներմուծում է բրազիլական էժան և ոչ բարձր որակի միս: Որքանով է համապատասխանում դա իրականությանը, էական չէ, քանի որ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի բնակիչները համոզված են, որ խոզերին վարակում են հիվանդություններով, և մարդիկ այլևս չեն համարձակվում զբաղվել դրանով՝ երկյուղելով, որ նույնը կկրկնվի:

2007-2008 թվականներին Աֆրիկյան ժանտախտ հիվանդությունը, որը պաշտոնապես համարվեց խոզերի՝ անտառներում արածելու հետևանք, անդառնալի հարված հասցրեց Տավուշի մարզի խոզաբուծությանը: Հազարավոր գլուխ անասուններ անկում ապրեցին: Հարյուրավոր գյուղացիական փոքր տնտեսությունների համար խոզաբուծությունը ապրուստի հիմնական միջոցն էր, որն ապահովում էր լավ եկամուտ:

Հայաստանի ներքին շուկան ունի տեղական խոզի մսի կարիք, հատկապես անտառներում պահված խոզերի, քանի որ այն զգալիորեն տարբերվում է արդյունաբերական տիպի խոզաբուծական համալիրներում և տնտեսություններում բուծվող խոզի մսից: Տավուշի մարզի սահմանամերձ հատվածի անտառներում հնարավորություն կա եռապատկել և տանապատկել խոզերի քանակը: Բացի այն, որ անտառներում պահված խոզի միսը համեղ է, գնի առումով այն դառնում է մրցունակ, քանի որ տարվա մեծ մասը անասունները կերակրվում են անտառներում՝ հաճարով, կաղինով, տարբեր հատապտուղներով: Խոզերի լեռնանտառային պահվածքը էականորեն նվազեցնում է ինքնարժեքը:

Համաձայն Գյուղնախարարության տվյալների, Հայաստանում տարեկան արտադրվում է մոտ 10 հազար տոննա խոզի միս մաքուր զանգվածով (17-18 հազար տոննա կենդանի զանգվածով): Այսպիսով, Հայաստանում արտադրվող և ներմուծվող խոզի մսի սպառումը մոտենում է 50-50 համամասնության: Սակայն եթե այսպես շարունակվի, ապա առաջիկայում Սամվել Ալեքսանյանի հետ փոխկապակցված ընկերությունը միայնակ ավելի շատ խոզի միս կներկրի, քան կարտադրեն տեղական հազարավոր փոքր ընտանեկան տնտեսությունները և մի քանի միջին խոզաբուծական (Արմավիրի և Արարատի մարզերում) ֆերմաները միասին վերցրած:

Ընդհանրապես, տեղական խոզի մսի սպառումը կարող է էապես ազդել անասնապահության այս ճյուղի զարգացման վրա: Սակայն մենաշնորհները իրենց սև գործն են անում՝ հարստացնելով իշխանությունների կողմից հովանավորվող մեկ մարդու և աղքատացնելով հազարավոր գյուղացիների: Ավելին, ներկրվող խոզի միսը մաքսային արժեքով այնքան էժան է, որ ցանկության դեպքում կարելի է կտրուկ նվազեցնել վաճառքի գինը այն շրջանում, երբ շուկա է հասնում գյուղացիների կողմից մթերվող խոզի միսը (դեկտեմբեր), և գյուղացիներին կանգնեցնել դժվարության առաջ:

Պարբերաբար լրատվամիջոցներում շրջանառվում են լուրեր, թե իբր տեղական խոզի միսը վարակված է հիվանդությամբ կամ մայրաքաղաքի որևէ շուկայում վաճառվել է սատկած խոզի միս: Տարածված կարծիք կա, որ սա նույնպես արվում է միս ներկրող օլիգարխի եկամուտները մեծացնելու և տեղական, որակով խոզի միսը շուկայից դուրս մղելու նպատակով:

Ջերմոցային տնտեսություն

Տավուշի մարզի սահմանային ցածրադիր շրջաններում ընտանեկան փոքր ջերմոցային տնտեսություններ հիմնումը կարող է դառնալ զբաղվածության և եկամտի նոր ոլորտ: Մարզի սահմանամերձ գյուղերի մեծ մասը գտնվում է ծովի մակերևույթից 650-ից մինչև 900 մետր բարձրության վրա, իսկ ձմռան միջին ջերմաստիճանը 0-ի սահմաններում է: Բնակլիմայական նման պայմանները նպաստավոր են ընտանեկան փոքր ջերմոցային տնտեսությունների զարգացման համար:

Մասնավորապես, ջերմոցային փոքր տնտեսություններ կարելի է հիմնել Բերդավան, Չինարի, Այգեձոր, Դովեղ, Մովսես, Բերքաբեր և մի քանի այլ սահմանամերձ գյուղերում, որտեղ ձմեռը համեմատաբար կարճ է և մեղմ: Խորհրդային տարիներին մեղմ կլիմա ունեցող Տավուշում ջերմոցային տնտեսություններ գրեթե չեն եղել: Դա, սակայն, չի նշանակում, որ պայմանները

հարմար չեն: Այսպես, խորհրդային տարիներին Տավուշում մերձարևադարձային կուլտուրաներ ևս չեն մշակվել, մինչդեռ այսօր Տավուշը հայտնի է արևելյան խուրմայի (*կարպյոկ*) այգիներով և առատ բերքով:

Ջերմոցային տնտեսությունների հիմնական արտադրանքի՝ լոլիկի և վարունգի համար, Հայաստանի ներքին շուկայում սպառման բավարար ազատ տեղ կա: Իսկ պակասը լրացնում է հիմնականում Թուրքիայից և մասամբ Իրանից ու Վրաստանից ներկրվող բանջարեղենով: Պատճառն այն է, այդ երկրներում արտադրվող բանջարեղենը զգալիորեն էժան է, քան այն, ինչ արտադրվում է Արարատյան դաշտավայրի ջերմոցային տնտեսություններում: Վրաստանում, Իրանում և Թուրքիայում կան կլիմայական գոտիներ, որտեղ ձմեռը անհամեմատ տաք է: Ջերմոցային տնտեսությունների ծախսերի մեջ հիմնական մասը կազմում է վառելիքը՝ Հայաստանի դեպքում՝ բնական գազը, որը սպառողին հասնում է բավականին թանկ գնով:

Ջերմոցային արտադրությամբ զբաղվող փոքր տնտեսությունների համար իրական սպառնալիք է թուրքական լոլիկը, որը Վրաստանի տարածքով հասնելով Հայաստան, շուկայում հայկական լոլիկից զգալիորեն էժան է վաճառվում: Կասկածներ ու մտահոգություններ կան, որ թուրքական լոլիկ ներկրողները Հայաստանի իշխանությունների հովանավորությունը վայելող գործարարներ են, ովքեր ապրանքի մի մասը չեն մաքսազերծում, ինչը նրանց հնարավորություն է տալիս համեմատաբար ցածր գներով այն վաճառքի հանել:

Թուրքական լոլիկի ներկայությունը հատկապես զգալի է Տավուշի մարզում: Քանի որ հայ-վրացական գլխավոր սահմանադուռը Տավուշում է՝ Բագրատաշենում, տեղի մանր առևտրականները ամենօրյա կտրվածով տարվա առնվազն վեց-յոթ ամիսներին թուրքական (ինչպես թուրքական լոլիկը, մյուս բանջարեղենն ու մրգերը, այնպես էլ զանազան ապրանքատեսակներ Թուրքիայից Հայաստան են հասնում հիմնականում Վրաստանի տարածքով) և վրացական լոլիկ են ներկրում փոքր քանակներով և վաճառում տեղի խանութներում: Ըստ էության, Տավուշի մարզում, քանի դեռ Արարատյան դաշտավայրի և տեղական բանջարեղենը չի հասունացել, սպառվում են հիմնականում թուրքական և վրացական արտադրության բանջարեղեն և մրգեր:

Տավուշի մարզում ջերմոցային տնտեսությունների գործը հաջողություն ունենալու դեպքում անգամ տեղական արտադրանքին լրջագույն մարտահրավեր է լինելու թուրքական և նաև վրացական բանջարեղենը: Այն ամիսներին, երբ հասունանում են լոլիկը, վարունգը, մյուս բանջարեղենը Արարատյան դաշտավայրում, Տավուշի շուկաներում և խանութներում սպառվում է այնտեղից բերվածը: Մյուս կողմից, Տավուշի լոլիկը և մյուս բանջարեղենը յուրահատուկ համ ունի և էկոլոգիապես մաքուր է: Եթե Տավուշի գյուղերը կարողանան ապահովել գոնե մարզի պահանջարկը, ապա դա ևս դրական փոփոխություններ կբերի մարդկանց սոցիալական վիճակում և գործազրկության կրճատման գործում:

Ջերմոցային տնտեսությունները, որոնց թիվը Հայաստանում հասնում է շուրջ 1000-ի, հիմնակում կենտրոնացած է Արարատյան դաշտավայրում և Կոտայքի մարզում: Գազի թանկացման պատճառով վերջին տարիներին դրանց թիվը կրճատվել է: Որոշ ջերմոցային տնտեսություններ աճուրդի հանվեցին՝ չկարողանալով վերադարձնել բանկերից վերցրած վարկերը: Վերջերս

հայկական լրատվամիջոցները բացահայտեցին, որ խոշոր ջերմոցային տնտնտեսությունների բիզնեսում ներգրավված են Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ, մասնավորապես՝ Սերժ Սարգսյանի գլխավոր խորհրդականը:

Գյուղմթերքի վերամշակում՝ ագրովերամշակող արդյունաբերություն

Հայաստանի մրգերը, հատապտուղն ու բանջարեղենը, չիրն ու մեղրը յուրահատուկ են իրենց համային հատկանիշներով: Հայաստանում ամենից արևահամն ու էկոլոգիապես մաքուրը համարվում են Տավուշի բարիքները: Մրգերի ու բանջարեղենի սպառման հետ կապված, լինի թարմ թե պահածոյացված վիճակում, հիմնական դժվարությունը սպառման շուկա գտնելն ու այդ շուկաներում հաստատվելն է: Դժվարություններ ունեն անգամ խոշոր և միջին ձեռնարկությունները:

Հայաստանի Գյուղնախարարության տվյալներով՝ Հայաստանում գործում է շուրջ 1600 սննդամթերքի արտադրության ձեռնարկություն, որոնցից մի քանիսն են միայն համամատաբար խոշոր: Պտուղ և բանջարեղեն վերամշակող խոշոր ձեռնարկություններից են Արտաշատի և Էջմիածնի պահածոների գործարանները, «Արարատ սննդի կոմբինատը», «Բորոդինո»-ն, «Եվրոթերմը», «ՄԱՊ»-ը, «Երևանի գարեջուրը», «Թամարա ֆրութը»: Չիր արտադրող խոշոր գործարան չկա, իսկ խաղող վերամշակող շուրջ հինգ տասնյակ ձեռնարկությունից մի քանիսն են համեմատաբար խոշոր՝ «Երևանի կոնյակի գործարանը», «Արտաշատ վինկոնը», «Երևանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատը», «Պռոշյանի կոնյակի գործարանը»:

Այս գործարանները զբաղեցրել են Հայաստանի ներքին շուկան, ինչպես նաև տարիների ընթացքում կարողացել են միջազգային շուկաներ դուրս գալ, առաջին հերթին՝ նախկին խորհրդային տարածք, նախ և առաջ՝ Ռուսաստան: Նորաստեղծ ձեռնարկությունների համար, անգամ երբ նրանք ազատվում են հարկային պարտավորություններից, դյուրին չի լինի տեղ զբաղեցնել ինչպես ներքին շուկայում, այնպես էլ գտնել սպառման արտաքին շուկաներ:

Պետությունը որոշ չափով կարող է լինել պատվիրատու և սպառող այն արտադրանքի, որը կարտադրվի սահմանամերձ համայնքներում: Այսպես, բանակը կարող է գնել սահմանամերձ գյուղական համայնքներում արտադրվող խոզի և թռչնի միսը, ձուն, պահածոները: Սահմանամերձ գյուղական համայքների արտադրանքը կարող է սպառվել սփյուռքում, բայց դրա համար սփյուռքյան կազմակերպությունների ու անհատ ձեռներեցների աջակցությունը կլինի ցանկալի և անհրաժեշտ:

Ագրովերամշակող արդյունաբերությունը՝ գյուղատնտեսական ապրանքների հենքի վրա արտադրությունը, չափազանց կարևոր է գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման իմաստով: Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջանը ամբողջ Խորհրդային Միությունում հայտնի էր իր դեղձով և Այրումի պահածոների հսկա գործարանով: Դեղձի այգիների մեծ մասը չորացան, իսկ պահածոների գործարանը, ինչպես հանրապետության բազմաթիվ այլ գործարաններ, մատնվեց պարապուրդի:

Վերջին տարիներին Տավուշի մարզում, հատկապես Դեբեդի բարեբեր հովտում, կրկին դեղձի այգիներ են ծաղկում: Սակայն, ի տարբերություն խորհրդային տարիների, երբ Նոյեմբերյանի դեղձը թարմ կամ պահածոյացված վիճակում մեծ պահանջարկ ուներ և սպառվում էր ողջ

խորհրդային տարածքում, այսօր իրացման լուրջ դժվարություն կա: Լինում են տարիներ, երբ դեղձը վաճառվում է ինքնարժեքից ցածր գնով՝ անգամ 50-ից 100 դրամով, քանի որ այս պտուղը հասունանալուց հետո հնարավոր է միայն մի քանի օր պահել: Հետևաբար, քանի դեռ լուծված չէ սպառման խնդիրը՝ լինի թարմ վիճակում, պահածոյացված կամ չորացրած (չիր), նոր այգիներ հիմնելը ռիսկային է:

Տավուշի մարզի տարածքում, նախքան «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքի ընդունումը, կային մի քանի վերամշակող արտադրամասեր: Դրանցից ՄԱԳԱ պահածոների գործարանը հիմնադրվել է 1994-ին, «Արթուր և Էդիտա» ՍՊԸ-ին պատկանող Ջուջևանի պահածոների գործարանը՝ 2004-ին, Այգեձորի «Էկո գարդեն արտադրական կորպորացիա» ՍՊԸ-ն՝ 2007-ին, իսկ Այրումի «Այրում ֆրութս» մրգերի և հատապտուղների վերամշակման գործարանը՝ 2014-ին: «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» օրենքը տարածվելու է միայն Այգեձորի «Էկո գարդեն արտադրական կորպորացիա» ՍՊԸ-ի վրա:

«Էկո Գարդեն»

Պահածոների գործարանների համար ամենից դժվար խնդիրը սպառումն է: Որտե՞ղ է սպառվելու արտադրանքը, հաշվի առնելով Հայաստանի այսօրվա սահմանափակ կոմունիկացիոն հնարավորությունները: «Էկո գարդեն»-ը իր էկոլոգիապես մաքուր, տեղական բարձրորակ հումքից պատրաստած «Վիտալ» ապրանքանիշով արտադրանքը հիմնականում սպառում է Ռուսաստանում շնորհիվ այն հանգամանքի, որ գործարանի հիմնադիրը բնակվում է Մոսկվայում և կարողանում է գտնել սպառման կետեր:

Գործարանը հիմնադրվել է 2007-ին Չինարի և Այգեձոր համայնքների միջև գտնվող տարածքում, առաջին արտադրանքը տվել է 2011-ին: Պահածոյացումը մասամբ կատարվում է տնային պայմաններին բնորոշ եղանակներով: Ամռան և աշնան ընթացքում գործարանում աշխատում է մինչև 40 մարդ Չինարի, Այգեձոր և Արծվաբերդ համայնքներից: 2012 թվականին գործարանը իրացրել է 78 միլիոն դրամի արտադրանք: Այսօրվա վիճակով գործարանը դեռևս օգուտով չի աշխատում, ղեկավարությունը նպատակ է դրել առաջիկա 8-10 տարիներին ծավալների ընդլայնման և նոր շուկաներ գտնելու պայմաններում եկամուտ ապահովել:

«Էկո գարդեն»-ում պատրաստվում են մրգային և բանջարեղենի պահածոներ: Գործարանը ընդունում է բոլոր այն մրգերն ու հատապտուղները, որոնք աճում են Բերդի ենթաշրջանի անտառներում: Յուրաքանչյուր տարի գործարանը հայտարարում է ընդունման գները: Անցնող տարիներին գործարանը ընդունել է մոշ, հոն, վայրի տանձ, սինդրիկ, շուշան, ընկույզ, վայրի մորի, ինչպես նաև մշակովի մրգեր և բանջարեղեն: Այս տարվանից գործարանը կարտադրի նաև անտառային մրգերի օղիներ:

Տնօրինության մոտավոր հաշվարկներով՝ գործարանը ընդունում է մոտակա անտառներում հասնող մրգերի և հատապտուղների փոքր քանակությունը միայն, մնացած մասը բաժին է հասնում վայրի կենդանիներին կամ փչանում է: Արտադրանքի սպառման ծավալների մեծացումը կարող է բերել նրան, որ ավելի շատ գյուղացիներ օգտվեն բնության բարիքներից և դրանք մթերեն «Էկո գարդեն»-ին:

Մրգերի, բանջարեղենի և հատապտուղի գները որոշում է գործարանը: Համեմատած խաղողի ընդունման գների հետ, որը Հայաստանում չափազանց ցածր է և չի հասնում 150 դրամի մեկ կիլոգրամի դիմաց, «Էկո գարդեն»-ում մթերվող հատապտուղների, մրգերի ու բանջարեղենի գինը համեմատաբար բարձր է:

«Այրում ֆրութս»

Նորաստեղծ այս գործարանը սկսել է աշխատել 2014-ի օգոստոսից: Այստեղ պահածոյացվում են ինչպես Տավուշի, այնպես էլ Լոռու մարզի մրգերն ու հատապտուղները: Նախատեսվում է տարեկան վերամշակել մինչև 300 տոննա միրգ և հատապտուղ: Գործարանը արտադրում է մուրաբաներ, ջեմեր և կոմպոտներ: Գործարանի ղեկավարությունը մտադրություն ունի նաև բացել չրերի, չորացված բույսերի և թեյերի արտադրամասեր:

Գործարանի կառուցման և սարքավորումների արդիականացման հարցում միանգամից մի քանի կազմակերպություններ իրենց նպաստն են բերել, այդ թվում ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակը, «Օրանժ» հիմնադրամը, Ֆրանսիայի Ռոն-Ալպ տարածաշրջանը, Ավստրիական զարգացման գործակալությունը, G2iA և CARE կազմակերպությունները, «Բի Էս ՍԻ» բիզնեսի աջակցման կենտրոնը և «Նոր Հորիզոն» վարկային կազմակերպությունը: Գործարանը, որտեղ մի քանի տասնյակ աշխատատեղեր են ստեղծվել, գտնվում է երկաթուղային Այրում կայարանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա:

Ջուջևանի պահածոների գործարան

Ջուջևանի պահածոների գործարանը հիմնվել է 2004 թվականին: Աշխատանքները հիմնականում կատարվում են ձեռքով: Գործարանը Ջուջևանի անտառային անուշահամ հատապտուղներից և մրգերից արտադրում է ավելի քան 30 տեսակ հյութեր ու մուրաբաներ: Արտադրանքի մեծ մասը արտահանվում է Գերմանիա, Ռուսաստան, Վրաստան և այլ երկրներ:

Վարագավանի Մագա պահածոների գործարան

Այս գործարանը հիմնադրվել է 1994-ին: Արտադրում է մեկուկես տանյակ տեսակի մուրաբաներ, մարինացված բանջարեղեն և բնական հյութեր: Գործարանի արտադրանքը արտահանվում է Ռուսաստան: Նախկինում արտադրանքն արտահանվել է մի շարք այլ երկրներ՝ ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Ուկրաինա:

Տավուշի մարզում կան ագրովերամշակող մի քանի այլ արտադրություններ՝ Իջևանի գինու և կոնյակի գործարանը, Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը, Դիլիջանի կաթնամթերքի «Դիլի» ընկերությունը, որը հիմնականում արտադրում է պանիր: Խորհրդային ժամանակներից մնացած Բերդավանի գինու գործարանը այժմ խաղողի մթերման կետ է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2014 թվականի նոյեմբերին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ միաձայն ընդունեց «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքի նախագիծը: Դեկտեմբերին Հայաստանի կառավարությունը հաստատեց սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ 32 համայնքների ցանկն ու այդ համայնքներին տրվող սոցիալական աջակցության տրամադրման կարգը:

Կառավարությունը «Գազպրոմ Արմենիա» ընկերությանն առաջարկեց 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ աջակցություն ստացող համայնքների բնակիչներին մինչև 360 խորանարդ մետր բնական գազի սպառման համար 50 տոկոսի չափով զեղչ սահմանել՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ նշելով, որ գանձվող գնի տարբերությունը կփոխհատուցվի ընկերությանը:

Սահմանամերձ 32 համայնքների այն բնակիչները, որոնք չեն օգտվում գազից, կստանան համարժեք գումար՝ ջեռուցման այլընտրանք ունենալու համար:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանն առաջարկվեց մինչև 1440 կիլովատ էլեկտրաէներգիայի սպառման համար վճարումը գանձել հաստատված սակագնից 50 տոկոս զեղչով՝ կրկին նշելով, որ գանձվող գնի տարբերությունը ընկերությանը կփոխհատուցվի:

Կառավարությունը նաև սահմանեց, որ վերոնշյալ ժամանակահատվածում ֆիզիկական և իրավաբանական անձանց օգտագործած ոռոգման ջրի դիմաց գանձվող վարձավճարի 50 տոկոսը կփոխհատուցի Հայաստանի կառավարությունը, ինչպես նաև որոշվեց, որ նշված 32 համայնքներում մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող անձանց անունից համապատասխան համայնքի բյուջե կվճարի կառավարությունը:

Ազգային ժողովում այս օրենքի նախագծի քննարկումների ընթացքում մի շարք պատգամավորներ նշեցին, որ անհրաժեշտ է հստակ տարբերակում դնել սահմանամերձ և սահմանապահ համայնքների միջև: Մասնավորապես, ՀՅԴ-ն ներկայացնող պատգամավորներից Արմեն Ռուստամյանը ընդգծեց, որ սահմանամերձ գյուղերը պետք է տարբերակել ըստ խոցելիության: Այսպես, կան համայնքներ, որոնք սահմանամերձ են, բայց հակառակորդի ուղղակի թիրախում չեն: Մյուս կողմից, կան համայնքներ, որտեղ մարդիկ չեն կարողանում դուրս գալ պատշգամբ կամ տնամերձ հողամաս, հանգիստ քայլել գյուղի փողոցով, քանի որ ամեն պահի կարող են դառնալ դիպուկահարի թիրախ և զոհ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում (այսուհետ՝ ցանկ) ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Սույն օրենքի իմաստով, սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեություն է համարվում ցանկում ներառված համայնքների վարչական սահմաններում՝

1) առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունը,

2) արտադրության կազմակերպումը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է իրացվում պատրաստի արտադրանքը՝ ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքների վարչական սահմաններում, թե դրանցից դուրս,

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության:

Հոդված 3. Ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝

1) այդ համայնքների վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից,

2) արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից,

բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից,

գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից,

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթեւ մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության, ազատվում է արտոնագրային վճարից, իսկ այդ գործունեությունն իրականացնող

և անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից,

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի եւ սոցիալական վճարի:

Հոդված 4. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով՝

1) վարում են եկամուտների և ծախսերի առանձնացված հաշվառում (կազմակերպությունների համար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում), որի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամուտը, ինչպես նաև այդ գործունեությունների հետ կապված ծախսերը հարկման նպատակով նվազեցվում են համապատասխանաբար նույն ժամանակաշրջանում ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով ստացվող համախառն եկամտի և դրա հետ կապված ծախսերի գումարի չափով: Եթե ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի որոշ տեսակների մասով հնարավոր չէ վարել առանձնացված հաշվառում, ապա այդ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ծախսերից հարկման նպատակով նվազեցվում են հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի մեջ ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով հաշվարկված համախառն եկամտի տեսակարար կշռին համապատասխան: Առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում եւ հայտարարագրերում,

2) իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին են ներկայացնում հաշվարկներ, հայտարարագրեր, հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր և տեղեկություններ:

Հոդված 5. Եթե ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման

արդյունքում արձանագրվում է ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում (այդ թվում՝ ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքների վարչական սահմաններից դուրս իրականացվող առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով), ապա՝

1) տարվա ընթացքում առաջին անգամ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է նախազգուշացում,

2) տարվա ընթացքում երկրորդ անգամ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառությունից հետո արձանագրվող՝ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտումների դեպքում կիրառվում են հարկային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

Եթե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջը խախտված լինելու մասին ստուգման ակտը կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունները սահմանված կարգով բողոքարկվել են, ապա դիմում-գանգատը մերժվելու մասին որոշումը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում: Դիմում-գանգատը բավարարվելու կամ դիմում-գանգատը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կարգով չեղյալ ճանաչվելու դեպքերում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողը շարունակում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ այն պահից, որ պահից, ստուգման ակտի համաձայն, դադարել էր օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից:

Եթե ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող ավելացված արժեքի հարկ վճարողի մոտ արձանագրվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մասը կազմող թիվ 4 հավելվածով սահմանված կարգի խախտում (անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու դեպք) կամ եթե հավելվածում նշված սահմանամերձ գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ արձանագրվում է անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման դեպք, ապա՝

1) տարվա ընթացքում առաջին խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը,

2) տարվա ընթացքում երկրորդ խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը և համապատասխան վարչական ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից կամ ավելացված արժեքի հարկից և շահութահարկից (եկամտային հարկից) ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ճանապարհային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ

1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը). նախագծերի փաթեթի նպատակը սահմանամերձ գյուղերում տնտեսական ակտիվության խթանումն ու գործարար միջավայրի բարելավումն է:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. թեև գործող օրենսդրությամբ սահմանամերձ գյուղական համայնքների տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացման համար կան որոշ հարկային խթաններ, այդուհանդերձ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք բավարար չեն:

Բացի այդ, հարկային վարչարարությանը հատուկ խնդիրների ու հարկումից խուսափելու ռիսկերի պատճառով նախկին տարիներին կիրառվել են հարկային հաշվառմանն առնչվող որոշակի սահմանափակումներ և հարկային հսկողության գործիքներ: Ներկայումս հարկային վարչարարության և հարկային հսկողության արդյունավետության բարձրացմամբ պայմանավորված՝ վերոնշյալ սահմանափակումներն ու հսկողական գործիքները կարող են որոշակիորեն կրճատվել:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1) 2015 թվականի հունվարի 1-ից ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը ազատել հիմնական հարկերից,

2) սահմանել, որ ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկը հետ է վերադարձվում բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարանի ձեռք բերման նպատակով ստացված եւ փաստացի բնակարանի ձեռք բերմանն ուղղված հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների չափով,

3) սահմանել, որ՝

ա) հարկային հաշիվները 2015 թվականի հունվարի 1-ից, իսկ այլ հաշվարկային փաստաթղթերը 2016 թվականի հունվարի 1-ից դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով,

բ) անփաստաթուղթ ապրանքների տեղափոխման կամ առաքման համար օրենքով նախատեսված տուգանքները չեն կիրառվում, եթե ուղեկցող փաստաթղթեր դուրս չգրելը պայմանավորված է ինտերնետային կապի անբավարար որակով կամ բացակայությամբ,

գ) վերացվում է առաքումների գրանցման գրքեր վարելու պահանջը,

4) վերացնել ՀՀ կառավարության հավանությանն արժանացող ներդրումային ծրագրերի մասով մաքսային սահմանին հաշվարկվող ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվելու համար սահմանված՝ 200 մլն. դրամ մաքսային արժեքով ներմուծում կատարելու նվազագույն շեմը,

5) աստիճանաբար անցում կատարել ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման հաշվեգրման սկզբունքին,

6) վերացնել ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար ստացված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկություններ ներկայացնելու պահանջը,

7) սահմանել, որ սահմանամերձ գյուղերում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները արտոնագիրը ստանում են առանց արտոնագրի վճարման,

8) նվազեցնել բնապահպանական, բնօգտագործման և ճանապարհային վճարները սահմանված ժամկետում չկատարելու համար նախատեսված տույժերի չափերը՝ համապատասխանաբար՝ յուրաքանչյուր օրվա համար 0.2 տոկոս եւ 0.25 տոկոս, փոխարինել 0.15 տոկոսով՝ հավասարեցնելով հարկի վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար գանձվող տույժի չափին,

9) սահմանել, որ պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու համար տույժերը հաշվարկվում են ոչ ավել, քան 365 օրվա համար՝ զուգահեռաբար յուրաքանչյուր օրվա համար սահմանված տույժի չափը՝ 0.5 տոկոս, փոխարինելով 0.15 տոկոսով՝ հավասարեցնելով հարկի վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար գանձվող տույժի չափին:

4. Կարգավորման առարկան. նախագծերի փաթեթի կարգավորման առարկան սահմանամերձ գյուղերում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հարկման համակարգն է և գործարար միջավայրը ընդհանրապես:

5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. նախագծերը մշակվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

6. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է սահմանամերձ գյուղերում իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը ազատել հիմնական հարկերից, ինչպես նաեւ նպաստել գործարար միջավայրի բարելավմանը:

Ազդեցության գնահատման մասին եզրակացություն

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետեւանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետեւանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետեւանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը որոշակի բարենպաստ ազդեցություն կունենա սահմանամերձ գյուղերում բնակչության համար ստոմատոլոգիական (ատամնաբուժական) և ատամնատեխնիկական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ֆիզիկական հասանելիության եւ ֆինանսական մատչելիության վրա:

Եզրակացություն

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ նախատեսվում է հարկերից ազատել սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը, ինչպես նաև հարկ վճարողների կողմից կատարվող գործարքների փաստաթղթավորման նպատակով 2016 թվականի հունվարի 1-

ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների) դուրս կգրվեն բացառապես էլեկտրոնային եղանակով:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որեւէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի նախագծերի ընդունմամբ որեւէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար եւ ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար եւ ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ընդհանուր առմամբ դրական ազդեցություն՝ նկատի ունենալով մի շարք միջոցառումների պատշաճ իրականացման հանգամանքը, մասնավորապես՝

Հարկային հաշիվների եւ այլ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման գործընթացի ներդրման փուլային եղանակի կիրառման հնարավորության դիտարկում, ինչը փոքր ծավալ ունեցող եւ ԱԱՀ վճարող համարվող տնտեսվարող սուբյեկտներին թույլ կտա խուսափել լրացուցիչ ծախսերի առաջացումից:

Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման բացառում:

Սահմանամերձ համայնքներում հարկազատման վերաբերյալ դրույթի գործողության համար որոշակի հստակ ժամկետի նախատեսում, որի ընթացքում հնարավոր կլինի գնահատել դրույթի ազդեցությունը տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա:

Եզրակացություն

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 271 և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման եւ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:

Եզրակացություն

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և

փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

10) 2015 թվականի հունվարի 1-ից ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը ազատել հիմնական հարկերից,

11) սահմանել, որ ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկը հետ է վերադարձվում բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարանի ձեռք բերման նպատակով ստացված և փաստացի բնակարանի ձեռք բերմանն ուղղված հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների չափով,

12) սահմանել, որ՝

ա) հարկային հաշիվները 2015 թվականի հունվարի 1-ից, իսկ այլ հաշվարկային փաստաթղթերը 2016 թվականի հունվարի 1-ից դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով,

բ) անփաստաթուղթ ապրանքների տեղափոխման կամ առաքման համար օրենքով նախատեսված տուգանքները չեն կիրառվում, եթե ուղեկցող փաստաթղթեր դուրս չգրելը պայմանավորված է կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանումներով,

գ) վերացվում է առաքումների գրանցման գրքեր վարելու պահանջը,

13) վերացնել ՀՀ կառավարության հավանությանն արժանացող ներդրումային ծրագրերի մասով մաքսային սահմանին հաշվարկվող ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվելու համար սահմանված՝ 200 մլն. դրամ մաքսային արժեքով ներմուծում կատարելու նվազագույն շեմը,

14) 3 տարվա ընթացքում աստիճանաբար անցում կատարել ԱԱՀ-ի գծով հաշվանցումների կատարման հաշվեգրման սկզբունքին,

15) վերացնել ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար ստացված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմնին տեղեկություններ ներկայացնելու պահանջը,

16) սահմանել, որ սահմանամերձ գյուղերում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին (այդ թվում՝ ֆիզիկական անձանց) արտոնագիրը տրամադրվում է առանց արտոնագրային վճարի վճարման,

17) նվազեցնել բնապահպանական, բնօգտագործման և ճանապարհային վճարները սահմանված ժամկետում չկատարելու համար նախատեսված տույժերի չափերը՝ համապատասխանաբար՝ յուրաքանչյուր օրվա համար 0.2 տոկոս և 0.25 տոկոս, փոխարինել 0.15 տոկոսով՝ հավասարեցնելով հարկի վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար գանձվող տույժի չափին,

18) սահմանել, որ պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու համար տույժերը հաշվարկվում են ոչ ավել, քան 365 օրվա համար՝ զուգահեռաբար յուրաքանչյուր օրվա համար սահմանված տույժի չափը՝ 0.5 տոկոս, փոխարինելով 0.15 տոկոսով՝ հավասարեցնելով հարկի վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար գանձվող տույժի չափին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտների կորուստը կկազմի շուրջ 30 մլրդ. ՀՀ դրամ:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Սահմանապահ համայնքների մասին

Պատգամավոր Նիկոլ Փաշինյանի ներկայացրած օրենքի այս նախագիծը (Պ-577-19.08.2014-ՏՏ-010/0) խորհրդարանը մերժեց, որից հետո կառավարությունը ներկայացրեց իր նախագիծը

Հոդված 1. Սույն օրենքի իմաստով Սահմանապահ համայնքներ են համարվում Հայաստանի Հանրապետության այն համայնքները, որոնց վարչական սահմանները ներառում են՝ Ադրբեջանի Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետութան սահմանից առավելագույնը երեք կիլոմետր հեռավորության վրա գտնվող բնակելի տներ կամ համայնքային նշանակութան վարչական շենքեր:

Սահմանապահ համայնքների անվանական ցանկը՝ սույն օրենքով սահմանված չափանիշներին համապատասխան, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 2. Սահմանապահ համայնքների բաժանորդների սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի ամսեկան վարձավճարի 50 տոկոսը փոխհատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից: Փոխհատուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Սահմանապահ համայնքի բնակիչները ազատվում են Սահմանապահ համայնքի տարածքում ունեցած հողերի հողի հարկից և Սահմանապահ համայնքի տարածքում ունեցած անշարժ գույքի գույքահարկից:

Հոդված 4. Սահմանապահ համայնքները ՀՀ պետական բյուջեից ստանում են լրացուցիչ օգնություն՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքի համար հաշվարկված դոտացիայի հարյուր տոկոսի չափով: Օգնությունը կարող է օգտագործվել բացառապես համայնքի ավագանու որոշմամբ՝ Սահմանապահ համայնքի բնակիչների առողջապահական կարիքները հոգալու, ինչպես նաև երիտասարդ ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու համար:

Հոդված 5. Սահմանապահ համայնքների՝ Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով օթեւանից զրկված բնակիչներին ՀՀ կառավարությունը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մեկամսյա ժամկետում ապահովում է համարժեք օթեւանով՝ նույն համայնքի տարածքում:

Հոդված 6. Սահմանապահ համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից, ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով վիրավորված ՀՀ քաղաքացիների բուժումն իրականացվում է պետպատվերով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով:

Հոդված 7. Սահմանապահ համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից, ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով զոհված

քաղաքացիների ընտանիքներին ՀՀ պետական բյուջեից տրվում է միանվագ օգնություն՝ 2 միլիոն դրամի չափով՝ հուղարկավորության ծախսերի համար:

Հոդված 8. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության օրենքը Սահմանապահ համայքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Հայաստանի Հանրապետության օրենքը Սահմանապահ համայքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ գտնվող համայնքների բնակիչներին սոցիալական որոշակի երաշխիքներով ապահովելու հրամայականով:

Նշված համայնքների բնակիչները գտնվում են կյանքին և գույքին սպառնացող մշտական վտանգի ներքո, ինչը էականորեն սահմանափակում է սեփական բարեկացությունը ապահովելու նրանց հնարավորությունը: Այս պայմաններում անհրաժեշտ է օրենքով արձանագրել ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ գտնվող համայնքների բնակիչներին կոմունալ մի շարք վճարների, հողի հարկի եւ գույքահարկի գծով արտոնությունների, ինչպես նաև մի շարք սոցիալական երաշխիքների տրամադրումը, ինչը նախատեսված է սույն օրենքով:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՐՏԵԶ



Աղբյուրը՝ http://map-caucasus.com/

ՀԱՅԱՍՏԱՆԻ և ԱՐՑԱԽԻ ՔԱՐՏԵԶ

Պայմանական նշաններ
ԵՐԵՎԱՆ Մայրաքաղաք
ՎԵՂԻ Քաղաք
Գառնի Գյուղ
ՇԻՐԱԿ ՀՀ մարզ և ԼՂՀ շրջան
Պետական սահման
ՀՀ մարզի և ԼՂՀ շրջանի սահման
Լիճ, ջրամբար
Գետ
4090 Արագած լ. Լեռնագագաթ
Ծանոթ. Մարզկենտրոնները ընդգծված են
Մասշտաբ 1:1 600 000
ՆԻՆՈՇՄԻՆԴԱ
ՏԱՎՈՒՇ
ԼՈՌԻ
ՇԻՐԱԿ
ԱՐԱԳԱԾՈՏՆ
ԿՈՏԱՅՔ
ԱՐՄԱՎԻՐ
ԱՐԱՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ՀԱԴՐՈՒԹ
ՎԱՅՈՑ ՁՈՐ
ՔԱՇԱԹԱՂ
ՇԱՀՈՒՄՅԱՆ
ԱՍԿԵՐԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՇՈՒՇԻ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱԴՐՈՒԹ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՍՅՈՒՆԻՔ
ՄԱՍԻՍ
ՄԱԿՈՒ
ՆԱԽԻՋԵՎԱՆ
ՍԻՍԻԱՆ
ԳՈՐԻՍ
ԿԱՊԱՆ
ՔԱՋԱՐԱՆ
ԿՈՎՍԱԿԱՆ
ՄԻՍՅԱՆԻՆ
ՄԵՂՐԻ
ԱԳԱՐԱԿ
ՕՐԴՈՒԲԱԴ
ՋՈՒԼՖԱ
ՋՈՒԼՖԱ
ՉԱՆԱՆԱՔ
ՓԱՌԱԿԱՋԱՅ
ՔԱՐՎԱՃԱՌ
ՎԱՐԴԵՆԻՍ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՍՈՂՔ
ԳԱՎԱՌ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ԵՂՎԱՐԴ
ԱՇՏԱՐԱԿ
ՆՈՐ ՀԱՃՆ
ԱԲՈՎՅԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԵԾԱՄՈՐ
ՄՍԱԽ
ԹՈՒՋԼՈՒՋԱ
ԱՐՏԱՇԱՏ
ՎԵՂԻ
ԱՐԱՐԱՏ
ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՎԱՅՔ
ՇԱՐՈՒՐ
ԻԳԴԻՐ
ՍԱՐԱՏՈՎ
ՍԱՂՈՒՆԱՖՅՈՒՌ
ՀԱՅՈՒՍ
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ
ԱԼԱՎԵՐԴԻ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՍՊԻՏԱԿ
ՎԱՆԱՁՈՐ
ԴԻԼԻՋԱՆ
ՄԱՐԱԼԻԿ
ԱՊԱՐԱՆ
ՇԱՂԿԱՁՈՐ
ՄԵՎԱՆ
ՀՐԱԶԴԱՆ
ՄՈՍԿՎԱ
ՍԵՎԱՆԻ ԼԻՃ
ՍԱՂՈՒՆԱՖՅՈՒՌ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՎՐԱՍՏԱՆ
ՇԵՔԻ
ՎԱՐԴԱՇԵՆ
ԹԱՎՈՒՇ
ՇԱՄՔՈՐ
ՄԻՆԳԵՉԱՈՒՐ
ԵՎԼԱԽ
ԳՅԱՆՁԱ (ԳԱՆՁԱԿ)
ԽՎԱՆԼԻՍ
ԴԱՇԲԵՍԱՆ
ՇԱՀՈՒՄՅԱՆ
ԲԱՐԴԱ
ԹԱՐԹԱՌ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ԱՍԿԵՐԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՇՈՒՇԻ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱԴՐՈՒԹ
ՀԱԴՐՈՒԹ
ՄԱՍԻՍ
ՄԱԿՈՒ
ՆԱԽԻՋԵՎԱՆ
ՍԻՍԻԱՆ
ԳՈՐԻՍ
ԿԱՊԱՆ
ՔԱՋԱՐԱՆ
ԿՈՎՍԱԿԱՆ
ՄԻՍՅԱՆԻՆ
ՄԵՂՐԻ
ԱԳԱՐԱԿ
ՕՐԴՈՒԲԱԴ
ՋՈՒԼՖԱ
ՋՈՒԼՖԱ
ՉԱՆԱՆԱՔ
ՓԱՌԱԿԱՋԱՅ
ՔԱՐՎԱՃԱՌ
ՎԱՐԴԵՆԻՍ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՍՈՂՔ
ԳԱՎԱՌ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ԵՂՎԱՐԴ
ԱՇՏԱՐԱԿ
ՆՈՐ ՀԱՃՆ
ԱԲՈՎՅԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԵԾԱՄՈՐ
ՄՍԱԽ
ԹՈՒՋԼՈՒՋԱ
ԱՐՏԱՇԱՏ
ՎԵՂԻ
ԱՐԱՐԱՏ
ԵՂԵԳՆԱՁՈՐ
ՎԱՅՔ
ՇԱՐՈՒՐ
ԻԳԴԻՐ
ՍԱՐԱՏՈՎ
ՍԱՂՈՒՆԱՖՅՈՒՌ
ՀԱՅՈՒՍ
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ
ԱԼԱՎԵՐԴԻ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՍՊԻՏԱԿ
ՎԱՆԱՁՈՐ
ԴԻԼԻՋԱՆ
ՄԱՐԱԼԻԿ
ԱՊԱՐԱՆ
ՇԱՂԿԱՁՈՐ
ՄԵՎԱՆ
ՀՐԱԶԴԱՆ
ՄՈՍԿՎԱ
ՍԵՎԱՆԻ ԼԻՃ
ՍԱՂՈՒՆԱՖՅՈՒՌ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՎՐԱՍՏԱՆ
ՇԵՔԻ
ՎԱՐԴԱՇԵՆ
ԹԱՎՈՒՇ
ՇԱՄՔՈՐ
ՄԻՆԳԵՉԱՈՒՐ
ԵՎԼԱԽ
ԳՅԱՆՁԱ (ԳԱՆՁԱԿ)
ԽՎԱՆԼԻՍ
ԴԱՇԲԵՍԱՆ
ՇԱՀՈՒՄՅԱՆ
ԲԱՐԴԱ
ԹԱՐԹԱՌ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՔԱՐՏԵԶ



Աղբյուրը՝ http://hy.wikipedia.org

Աղբյուրը՝ http://www.kovkas.com/news/2762

ԱՆԻ կենտրոնի մասին

Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ հիմնադրամը (կրճատ՝ ԱՆԻ կենտրոն) հիմնադրվել է 2014 թվականի հոկտեմբերի 31-ին:

Պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը ԱՆԻ-ն գրանցել է 2014 թվականի նոյեմբերի 11-ին:

Հաստատության գործունեությունը համակարգում է լրագրող, կովկասյան հակամարտությունների հարցերով փորձագետ Թաթուլ Հակոբյանը:

ԱՆԻ-ն պատրաստում է զեկույցներ և վերլուծություններ Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության, տնտեսության, գյուղատնտեսության, Սփյուռքի, այդ թվում՝ ներքին Սփյուռքի, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների, Արցախյան հակամարտության, տարածաշրջանային զարգացումների և միտումների մասին: Կենտրոնը կազմակերպում է խորհրդաժողովներ, կլոր սեղաններ և հայագիտական թեմաներով տարաբնույթ ձեռնարկներ, արժեքավոր գրքերի շնորհանդեսներ:

E-mail aniarcf@gmail.com

Webpage www.aniarc.am